

W. L. Supply note

Q n h c e p r y

891.99

2-30

1919



ՀՐԵՏԱՐԵԱՌՈՒԹԻՒՆՆ 89. ԸՆԿ. „ՊԵՃԱՏՆՈՅ ԴԷԼՕ“.

# „ՔՈՂԱՐԻԿ“

Դրանում 4 գործ.

ՀԵՂ. Մ. ՎԱՐԴԻԿԵԱՆԻ:



891.99
4-30

Գանձակ  
Տպ. Ընկ. „Պէշատնօհ Դէլօ“  
1919 թ.

109

NOV 2011

ՀՐԵՏԱՐԵԿՈՒԹՅՈՒՆ ՏԳ. ԸՆԿ. „ՊԵՃԱՏՆՈՆ ԳԵԼՕ“.

891.99  
4-30

# „ԳՈՂԱՐԻԿ“

Դրամա 4 գործ.

ՀԵՂ. Մ. ՎԱՐԴԻԿԵԱՆԻ:



Գանձակ  
Տպ. Ընկ. „Պէշտոնօս Դէլօ“  
1919 թ.

0 9 . 98 . 0013

37293

# 2 0 Ն

Հայոց թատրոն, դու, որ լուսաւորութեան ու իմաստութեան կա-  
 ճառն ես, դու, որ մարդկանց կեանքի հայելին ես, ես երկիւղացու-  
 թեամբ ու սիրով մօտենում եմ քո սրբազան պատերին ու ձգում  
 եմ այս փոքրիկ լուսաս քո զանձարանդ: Թող Գոհարիկներ ու  
 Ռուբէններ որպէս մաքուր ու ազնիւ տիպեր մի մի լուսատու ջա-  
 հեր լինին մեր ճահճոտ ու բարոյեապէս լքւած կեանքի համար:

ՄԱԿԱՐ ՎԱՐԴԻԿԵԱՆ:

Ներկայացնակն իրաւունքն օրէնքով վերապահուած է հեղինակին:



16834-58

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ:

- |   |       |
|---|-------|
| 1) Եղիսաբէթ Գուլումեան հարուստ վաճառականի կին.            | 60 տ. |
| 2) Գոհարիկ նրա ազգիկը                                     | 22 տ. |
| 3) Զաքար Գուլումեան հին շինովնիկ                          | 60 տ. |
| 4) Ռուբէն Գէորգեան Արուսեակի փեսացուն.                    | 25 տ. |
| 5) Արուսեակ՝ Գոհարիկի ընկերուհին                          | 25 տ. |
| 6) Իշխան Դաւիթ Փիրուզեան                                  | 25 տ. |
| 7) Իշխան Սաֆիրեան Դաւիթ Իշխանի մորեղբայրը հին գինուորական | 55 տ. |
| 8) Սմբաթ բէգ Գուլումեանցների ազգականը (վաճառական)         | 40 տ. |

Աղախին, պարտիզպան:

## ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.

Բեւը ներկայացնում է արեւելեան ճաշակով զարդարած սեւեւակ. քեւի խորում մէկ դուռ, որը սակում է դէպի պասշ-գաւրը: Այ ու ճախ դուներ: Զախ կողմը յուսանոս: Գասից կախ-ւած է գեւիտ, իսկ աջ կողմը Գուլումեանցի պասկերը: Զախ կողմը դաշնամուր: Սեղանի վրայ քափքփած եւ գրէր:

### Տ Ե Ս. I.

ԳՈՀԱՐԻԿ. — (Հաւարում է զրքեր):

ԵՂԻՍԱԲԵԹ. — (Մտնում է) Գոհարիկ:

Գ Ո Հ Ա. — Ի՞նչ կայ մայրիկ:

Ե Ղ Ի. — Ի՞նչու երեկ չեկար հօրեղբորդ տուն, նրանք քեզ շատ սպասեցին:

Գ Ո Հ Ա. — Ժողով ունէինք, զրականական ժողով ու շատ հետաքրքիր ժողով. զասախօսում էր Սահրազեանը, նիւթը «Հայաստանի վերածնունդը» շատ հետաքրքիր նիւթէր:

Ե Ղ Ի. — (Անբաւական) Ամբողջ գիշեր ժողով ունէիր:

Գ Ո Հ Ա. — Թէե ոչ ամբողջ գիշեր, բայց ուշ լինելու պատճառ չեկայ:

Ե Ղ Ի. — Ասա, որ հօրեղբորդ տունը քո աչքում փուշ է երևում:

Գ Ո Հ Ա. — Ոչ փուշ է երևում և ոչ էլ նուշ:

Ե Ղ Ի. — Այդ ի՞նչ է նշանակում:

Գ Ո Հ Ա. — Կան շատ պատճառներ: (Արկղից հանելով աքճա-նակը, սուրը, ու սկսում է մաքրել):

Ե Ղ Ի. — Դարձեալ ատրճանակ, փամփուշտներ, սուր, հեռու պահիր, յանկարծ մի փորձանք չբերի: Ի՞նչու համար ես պահում:

Գ Ո Հ Ա. — Ի՞նչ անես, ժամանակիս պահանջն է, մեր արեան դարում գենքն է վճռում ամեն ինչ և ոչ թէ խօսքը, ուստի, որպէս ապահովութիւն պէտք է պահել տանը:

Ե Ղ Ի. — Բայց մոռանում ես այն պատգամը, որ ասում է «Մի սպանաններ»



Գ Ո Յ Ա.—Ես հակառակեմ սպանութեան, բայց եթէ մէկը ինձ մահ է սպանում, պէտք է պաշտպանել թէ ոչ...

Ե Ղ Ի.—Բայց դու չէ որ դենք գործածել չես կարող:

Գ Ո Յ Ա.—(Պարծաւեփով) Ո՛չ ինչ... մի մազ անգամ չեմ վրիպի:

Ե Ղ Ի.—Այդ ե՛րբ սովորեցիր և ճամփ:

Գ Ո Յ Ա.—Մեր յայտնի հրացանաձիգ Ռուբէն Գէորգեանից:

Ե Ղ Ի.—(Ջարմուգած) Ռուբէն Գէորգեան:

Գ Ո Յ Ա.—Այո, Ռուբէն Գէորգեանը, որին դու ևս լաւ ճանաչում ես:

Ե Ղ Ի. (Տաւալակով) Բայց...

Գ Ո Յ Ա.—Բայց ի՞նչ:

Ե Ղ Ի.—(Անհանգիստ) Էնպէս...

Գ Ո Յ Ա.—Էնպէս... չեմ հասկանում:

Ե Ղ Ի.—Այն, որ Ռուբէն Գէորգեանի հաճախ այցելութիւնը՝ մարդիկ մի տեսակ վատ բացատրութիւն են տալիս:

Գ Ո Յ Ա.—Ի՞նչ բանի համար:

Ե Ղ Ի.—Չգիտեմ, չգիտեմ, ինչոր մի վատ հետեանքների համար:

Գ Ո Յ Ա.—Ջարմանալի է, եթէ չ'ասեմ ծիծաղելի, վատ հետեանքներ... ինչ վատ հետեանքներ կարող է լինել:

Ե Ղ Ի.—Այստեղ ծիծաղելի ոչինչ չկայ, աղջկայ նամուսը, որ կայ մի արկղ ոսկի է, որի բանալին պէտք է ծածկուած պահել:

Գ Ո Յ Ա.—Այդ կողմից, երկիւղ չկայ, ապահովագրած է իմ նամուսս և ոչ որ չի համարձակուի իր կեղտոտ ձեռքերը նրան կպցնել:

Ե Ղ Ի.—Ես չեմ կասկածում, բայց իմացիր, որ ամանը վայր ընկաւ՝ փշրեց, թէև ինքը ոչինչ չ'արժէր բայց ձայնը մեծ գուրս եկաւ:

Գ Ո Յ Ա.—Դատարկ ձայն, որ անմիտ մարդիկ ուշադրութիւն են դարձնում:

Ե Ղ Ի.—Բայց այդ դատարկ ձայնն էլ երբեմն փոթորիկ է առաջացնում, ինչպէս փոքր կայծից հրդէհ է առաջանում, պէտք է խելացի լինել, պէտք է մարդս իրան դիրքը, ով լինելը գնհատի, մարգարիտը խոզերի առաջ չեն ածում:

Գ Ո Յ Ա.—Մայրիկ, կար ժամանակ, որ դու ձեռքիցս բռնած տանում էիր, որ կողմն ուզում էիր և ինչպէս ուզում էիր, բայց այժմս, ես կարիք չեմ գգում, ես առանց ուրիշի օգնութեան կարող եմ քայլել, որ կողմը կամենամ եւ ինչպէս կամենամ:

Ե Ղ Ի.—Ոչ, այդպէս չէ, պէտք է յարգել հասարակական կարծիքը, եթէ ոչ մեր կեանքը մի այլանդակ բան կ'առնայ:

Գ Ո Յ.—Այո, եթէ այդ կարծիքը ճշմարտութեան վրայ է հիմնուած, իսկ եթէ բանբասանքների ու ասէկօսենների վերայ, ոչ մի արժէք պէտք է չտալ, այդպիսի խօսակցութիւններ միայն այլանդակում են ճշմարտութիւնը ու շփոթում ամեն ինչ:

Ե Ղ Ի.—Եթէ իմ ասածներս չես հաւատում՝ կարող ես հարցնել հորեղբորդ: Երէկ այնպիսի խօսքեր ասացին մարդիկ, որ բարկութիւնիցս քիչ էր մնում ճարէի, և ես չեմ կարող մարդկանց բերանները փակել:

Գ Ո Յ.—Չունը հաջում է քամին տանում է, ի՞նչ կարող է լինել այդպիսի մարդկանց ասածները:

Ե Ղ Ի.—Ասում են, որ նա, այսինքն Ռուբէն Գէորգեանը մեր տան համապատասխանող հիւր չէ, նա ո՛վ, մենք ո՛վ: Տես իշխան Փերուզեանը նրանք իշխան են, անուն ունին, իսկ Ռուբէն Գէորգեանը մեր աղախնի որդին . . . հ'ը, հ'ը..

Գ Ո Յ.—Մեր աղախնի որդին մարդ չէ, գուցէ աւելի լաւ մարդ՝ քան այդ բոլոր ասողները:

Ե Ղ Ի.—Բայց ինչ համեմատութիւն, մէկը աղնատոհմ, իսկ միւսը մեշչանին, ֆո՛ւ...

Գ Ո Յ.—Տխրողները նման են հասարակ քարերին, որ ոչ մի փայլ կամ նշանակութիւն ու արժէք չունին: Տխրողները չեն մարդուս զարդարանքները, այլ այն մարդկային արժանաւորութիւնները, որը ունեն իրենց մէջ:

Ե Ղ Ի.—Չանգի ձայն է, ո՛վ պէտք է լինի:

### Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ի Ի .

(Ա Ղ Ա Խ Ի Ն և Ն Ո Յ Ն Ք)

Ա Ղ Ա.—(Անրա գալով) Փրփորդ Արուսեակ: (Եղիսաբէրը հեռանում է):

ԱՐՈՒՍԵԱԿ.—(Անրա գալով շտապով) Դոհմարիկ, շուտ --

Գ Ո Յ.—Ի՞նչ կայ, էդպէս ափալ-թափալի ես ընկել:

ԱՐՈՒՍ.—(Պատեաց ձայնով) փամփուշտներ:

Գ Ո Յ.—Ի՞նչ, մի որևէ բան կայ (Վսխեցած) ասա, խօսիր:

ԱՐՈՒՍ.—Ի՞նչ ասեմ, գիտես, որքան շատ է գնդակը՝ այնքան ապահով է յաղթութիւնը:

Գ Ո Ն.—(Վարարած հասնում տալիս է) 500-ը բաւական է, դորանից աւելի չ'կայ:

ԱՐՈՒՍ.—Ոչինչ, այնտեղ էլ բաւականի կայ... Չ'մոռանամ ասել, որ Ռուբէնը քեզ բարեւում է:

Գ Ո Ն.—Ի՞նչ կայ, միայն այսօր չենք տեսնուի:

ԱՐՈՒՍ.—Սիրահարի համար սիրելիս, մի ժամը տարւայ երկարութիւն ունի:

Գ Ո Ն.—Նա սի՛րում է:

ԱՐՈՒՍ. Նա երկու ֆրոնտի վերայ է կուում, մէկը քո սրտի, իսկ միւսը թշնամիների դէմ, երկրորդը նրա համար այնքան մտահոգիչ չէ, որքան առաջինը: Մ'իթէ դու չես նկատել, որ նա դէպի քեզ մի առանձին տրամադրութիւն ունի:

Գ Ո Ն.—Ինչպէս ասեմ:

ԱՐՈՒՍ.—Սուս, մի ծածկիր ինձանից, դուն նոյնպէս՝ երբ նորան տեսնում ես ուղղակի շարագունում ես... էհ, ինչ և իցէ, նա սիրելի պարոն է... Ես ուշանում եմ: Ջանգի ձայն է, երեի նա է: Ես գնամ:

Գ Ո Ն.—Իզուրես գնում, մեզ չես խանգարիլ:

ԱՐՈՒՍ.—Երրորդ անձի ներկայութիւնը փուշի պէս աչքն է ծակում սիրահարների:

Գ Ո Ն.—Բայց ես սիրահարւած չեմ...

ԱՐՈՒՍ.—Էլի ծածկում ես:

Գ Ո Ն.—(Կնկմարով) ինչպէս ասեմ... այո, և սիրում եմ:

Տ Ե Ս. III.

(ՆՈՅՆՔ ԵՒ ՌՈՒԲԷՆ)

ՌՈՒԲԷՆ.—(Մտնում է) Արուսեակ, այդ ո՛ւր. (Ձիւնած հրացանը ձեռին):

ԱՐՈՒՍ.—Չտապում եմ հարկաւոր գործի: Նախաճաշիկ եմ տանում թշնամուս (Գնում է) (Ժիծաղում եմ)

ՌՈՒԲԷՆ - Ահա, երրորդ գիշերն է, որ չեմ քնել, հրացանիս վրայ հենւած մնացել եմ դիրքի վերայ:

Գ Ո Ն.—Դժւար է բայց ի՞նչ անենք, այդ է գինւորի ճակատագիրը երբ նա հայրենիքն է պաշտպանում: Վտանգ չ'կայ թշնամուց:

ՌՈՒԲԷՆ. Վտանգը կայ, քանի որ մեծէ նրանց ոյժը բայց կկուենք մինչև վերջին փամփուշտը և վերջին մարդը:

Գ Ո Ն.—Մ'իթէ կառավարութիւնը չի կամենում այս եղբայրասպան կուրն վերջ դնել:

ՌՈՒԲԷՆ.—Ի՞նչու համար վերջ դնի, քանի որ ձեռնտուէ ազգամիջեան կռիւը, բաժանիր ու որ տիրես, ահա, կառավարութեան ձգտումը:

Գ Ո Ն.—Չէ որ Կովկասեան ազգերը խաղաղ քնով են քնած, էլ ինչո՞ւց է վախենում կառավարութիւնը:

ՌՈՒԲԷՆ.—Նրանց խաղաղ երազներ անգամ խանգարում են քունը:

Գ Ո Ն.—Բայց ի՞նչ սարսափելի կ'լինէք՝ եթէ թշնամին ներս խուժէք քաղաքը:

ՌՈՒԲԷՆ.—Մի վախէք օր. Գոհարիկ, կ'պաշտպանեմ մինչև արեանս վերջին կաթիլը, թշնամին միայն իմ դիակիս վերայ անցնելով կարող է ներս խուժել այս տունը:

Գ Ո Ն.—Ինչ սարսափելի բան, երևակայել անգամ դժւար է:

ՌՈՒԲԷՆ.—Մի վախէք, թշնամին ամօթահար ետ կ'փախչի: Տեսնում էք, ինչպէս անվախ մաքրում էք ատրճանակը, միթէ ուրիշ անգամ կանէիք:

Գ Ո Ն.—Կարիք էլ չ'կար:

ՌՈՒԲԷՆ.—Կարիքը հնարաւոր է դարձնում ամեն ինչ:

Գ Ո Ն.—Բայց դուք տխուր էք, չ'լինի թէ մի որեւէ նախազգացում ձեզ հանգիստ չի տալիս, ասացէք պարզապէս:

ՌՈՒԲԷՆ.—Ոչ, ոչ, երգում եմ, որ մահս էլ առաջս կանգնած լինի ժպտով կ'ընդունեմ: Այս ամեն մեզ շրջապատող իրերը յիշեցրեց մեր մանկութեան քաղցրիկ օրերը, այն պատշգամբը՝ որտեղ դուք տիկնիկ էիք խաղում, այստեղ պատկերներ էիք ցոյց տալիս: Այստեղ ամեն մի անկիւն յեշեցնում է մեր անցեալ մանկութեան օրերը:

Գ Ո Ն.—Այո, յիշում եմ և որքան քաղցր է այդ յիշողութիւնները:

ՌՈՒԲԷՆ.—Դուք չ'գիտէք, թէ ինչ անսահման երջանկութիւն եմ զգում սրտիս խորքում:

Գ Ո Ն.—Անկասկած, դա հոգեբանական մի երևոյթ է: Հրացանի ձայներ: Ա՛խ, ինչո՞ւ են ընդհատուում այս բախտաւոր ըուպէներ:

ՌՈՒԲԷՆ.—Երևի թշնամին յարձակում է սկսել. (Ատում է հրացանի ձայներ:) Գէտք է շտապել դիրքերը, ներէք (վազում է):

Գ Ո Ն.—Գնա խաղաղութեամբ: (Ճանապարհ գցելով):

Տ Ե Ս. IV.

(ՆՈՑՆՔ ԵՒ ԵՂԻՍԱԲԷԹ)

ԵՂԻՍԱԲԷԹ.—(Մտնելով վախեցած) Գոհարիկ, Գոհարիկ (նկատելով) Ի՛նչես այդ լուսամուտի առաջ կանգնել, չես լսում հրացանների տրաքոցը—Տէր իմ Աստուած, հեռացիր այդտեղից:

Գ Ո Ն.—Ի՛նչես վախենում, մայրիկ:

Ե Ղ Ի.—Ինչպէս թէ ի՛նչես վախենում, յանկարծ մի խելար գնդակ թռչի այս կողմը:

Գ Ո Ն.—Մի վախիր, մեզնից հեռու է:

Ե Ղ Ի.— Գնաց Ռուբէն Գէորգեանը:

Գ Ո Ն.— Ինչպէս տեսնում ես:

Ե Ղ Ի.— Ի՛նչ էր ասում:

Գ Ո Ն.—Մենք այստեղ գիրչերները հանդիստ բնում ենք, իսկ նա երեք գիրչեր շարունակ արթուն հսկելիս է եղել:

Ե Ղ Ի.—(Լսում էն Տրափոցներ) վայ, վայ, աւելի սաստկացաւ...արի այս կողմը:

Գ Ո Ն.—Սարսափելի է, անի, Աստուած իմ, դու փրկիր...

Ե Ղ Ի.—Գնամ տեսնեմ ծառաները ինչնն անում, (գնում է):

Գ Ո Ն.— (Մենակ,) պէտք է գնացած: (Վերցնում է անձաճակր, կապարձ, կախում մէջքին վագում է շտապով):

Տ Ե Ս. V.

(ՆՈՑՆ ԵՒ ԶԱՔԱՐ)

Զ Ա Ք Ա Ր.—(Պատահելով Գոհարիկին) Այդ ուր:

Գ Ո Ն.— Գործ ունիմ:

Զ Ա Ք.— Ի՛նչ գործ ունես այս սարսափելի իրարանցման մէջ երբ շունը իրան տիրոջ չի ճանանչում, ես հազիւ թէ մեր տանից եկայ (քունելով):

Գ Ո Ն Ա.— Ես չեմ վախենում: (գնում է):

Տ Ե Ս. VI.

(ՆՈՑՆ ԵՒ ԵՂԻՍԱԲԷԹ)

Զ Ա Ք Ա Ր.— Սա ի՛նչ խելագարութիւն է:

Ե Ղ Ի.— Ում մասին է խօսքը:

Զ Ա Ք.— (անբարակաճ) Քո աղջկայ:

Ե Ղ Ի.— Ուր է:

Զ Ա Ք.— Ո՛ւր է... Էնպէս շտապով վազեց դուրս, որ կարծես թէ ուզար եղած լինի:

Ե Ղ Ի.— Ինչու թողիր:

Զ Ա Ք.— Լսեց... այժման աղջկերբը... եաման:

Ե Ղ Ի.— Վայ գլխիս:

Զ Ա Ք.— Լաւ, ո՛ւրես գլուխդ ծեծում:

Ե Ղ Ի.— Ի՛նչես ասում, մի բան որ պատահի:

Զ Ա Ք.— Ո՛վ է մեղաւոր: (Տրափոցներ):

Ե Ղ Ի.—(Ականջները ծածկելով) Վայ Գոհարիկ ջան, ես որտեղ գտնեմ նորան:

Զ Ա Ք Ա Ր.— Երեւի ետ կ'դառնայ, այդքան էլ յիմար չէ, որ գնայ գլուխը վտանգի մէջ ձգի:

Տ Ե Ս. VII

(ՆՈՑՆՔ ԵՒ ԳՈՀԱՐԻԿ)

Գ Ո Ն.—(ներս գալով ուրախ): Թշնամին պարտեց, փախաւ...

Ե Ղ Ի.— Ձեռքիդ ի՛նչ է պատահել:

Գ Ո Ն.— Գնդակը մի փոքր քերծեց ձեռքս:

Ե Ղ Ի.— Գժեկիս, ուր էիր գնում... ո՞վ գիտէ ձեռքիդ մի բանէ պատահել: Զ վախեցար... որ սպանէին:

Գ Ո Ն.— Այդ բոպէին մահան մասին ոչոք ոչինչ չի մտածում:

Զ Ա Ք.— Երեւի հաշտեցին:

Ե Ղ Ի.— Է՛, է... ուր էր թէ այդպէս լիներ:

Գ Ո Ն.— Սպիտակ գրօշակներ խաղաղութեան նշան է: Գալիս են:

Ե Ղ Ի.—(Վախեցած) Մի այս կողմը կանգնիր ի սէր Աստուծոյ:

Զ Ա Ք.— Բայց դրանց հաւատալ չի կարելի, այնտեղ սպիտակ դրօշակ են բարձրացնում, այն ինչ ետեից կրակ են տալի, նամարդներ են:

Գ Ո Ն.— Թէև այժմս լաւ են հասկացել «Չէիթանի» խարդախութիւնները:

Ե Ղ Ի.— Ո՛վ է այդ շէիթանը:

Գ Ո Ն.— Դա, մեր լիրբ կառավարութիւնն է:

Զ Ա Ք.— (Ցածր ձայնով) Սուս, գգոյշ, այս պատերն էլ ականջ ունեն:

Գ Ո Ն.— Թող նգովի ու խորտակի վերելից ներքև այդպիսի կառավարութիւնը:

Զ Ա Ք.— (Վախեցած) Զգոյշ, ինչեր ես դուրս տալիս:

Ե Ղ Ի.— Ուզում ես մեզ էլ ու քեզ էլ կրակի մէջ ձգել. Ուր ես գնում:

Գ Ո Յ. — Ոչոք, գալիս եմ: (Գնում է):

Ձ Ա Ք. — Տեսնում ես, որ քո խօսքերին արժէք չի տալիս:

Ե Ղ Ի. — Ի՞նչ անեմ, փոքր չէ, որ ոտները կապեմ:

Ձ Ա Ք. — Ի՞նչ անես, դու սկզբից պէտք է սպիտակ ատամ ցոյց տայիր և սև սիրտ:

Ե Ղ Ի. — Ի՞նչեր ես ասում, Ջաքար:

Ձ Ա Ք. — Ես երեկ էլ ասացի, որ Սաքոյի տղան զրա խելքն ու միտքը յափշտակել է:

Ե Ղ Ի. — Ես չեմ կարծում, որ Գոհարիկը այդքան յիմար լինի և իր լաւն ու վատը չհասկանայ:

Ձ Ա Ք. — Դու միշտ կարծում ես:

Ե Ղ Ի. — (Վախեցած) Ի՞նչ աղմուկ է այս: (Գնալով դեպի պատշգամբը):

Գ Ո Յ. — (Մտնում է) Տեսէք զնում են:

Ե Ղ Ի. — Ուրեն զնում:

Գ Ո Յ. — Փոխարքայի մօտ հաշտութիւն կնքելու:

ՁԱՅՆՔ. — Ուռն, ուռն... կեցցէ համերաշխութիւն:

Ձ Ա Ք. — Հայերի մէջ համերաշխութիւն կարող է լինել:

Գ Ո Յ. — Ընդհանուր դժբախտութեան ժամանակ այո, նրանք համերաշխ են եղել:

ՁԱՅՆՔ. — Ուռն, ուռն: Կեցցէ...

Ձ Ա Ք. — Ռուբէնը գալիս է: (Ուզում է գնալ):

Ե Ղ Ի. — Այդ ո՞ւր:

Գ Ո Յ. — Ռուբէնն է... (Գնում է):

ՁԱՔԱՐ. — Կատարեալ խելագարւել է նորա համար. Քեզ ասում եմ, Եղիսաբէթ, պէտք է լաւ մտածել, սա հանար չ'կարծես... պետք է կրակը անդն ու տեղը հանգցնես, թէ չէ քանի հեռու տարածւի այնքան աւելի դժուար կ'լինի հանգցնել. օձի գլուխը իր սաղմի մէջ պէտք է խեղտես:

Ե Ղ Ի. — Դալիս են, բան չ'սես:

Տ Ե Ս. VIII.

(ՆՈՅՆ ԳՈՀԱՐԻԿ և ՌՈՒԲԷՆ)

ՌՈՒԲԷՆ. — Դուք չէք կարող երևակայել՝ թէ այդ հրոսակների յորդանները ինչպէս էին փախչում մեր ամեն մի գլոհից, չ'նայեած նրանց գերակշռող թւին: (ցաւ զգալով):

Գ Ո Յ. — Ի՞նչ պատահեց, ցաւում է:

ՌՈՒԲԷՆ. — Ոչինչ, վէրքը զինուորի գարգն է: (Նկատելով նրանց) Ներեցէք, տիկին Եղիսաբէթ, բարև ձեզ, բարև ձեզ պարոն Ջաքար:

Ե Ղ Ի. — (Առանց հաճոյքի ձեռք սարկով) վերաւորւած էք:

ՌՈՒԲԷՆ. — Այո, տիկին:

ՁԱՔԱՐ. — (Հեզուակալ) Դա էլ կուի է...

ՌՈՒԲԷՆ. — Մի տեղ, ուր ընկնում են հարիւրաւոր վիրաւոր և սպանւածներ՝ էլ ինչպէս անւանել:

Գ Ո Յ. — (Վիրաւորւած) Իհարկէ ձեզ համար ոչինչ հօրեղբայրս, չէր լինի մի գիշեր էլ դուք գնայիք ու լուսացնէիք դիրքերում:

ՌՈՒԲԷՆ. — Դա կուի էր երկու ազգերի բարոյեական ոյժի և յազմեց այն ոյժը, որի մէջ այդ ոյժի գիտակցութիւն կար:

ՁԱՔԱՐ. — Այսպէս թէ այնպէս դա մի սարքած խաղ էր, որ վերջացաւ երկու ազգերի իրար ջարդերով և վնասներով:

ՌՈՒԲԷՆ. — Երբուրեւ եմ ձեզ այդ եղբայրասպան կուրի սարքողը ինքը կառավարութիւնն էր, մեր հարեանը իր տգիտութեան պատճառաւ ընկաւ նրանց ցանցի մէջ և մեզ էլ ձգեց, եթէ ոչ՝ մենք ոչ մի դէպքում այդպիսի մի դաւադիր գործ մեր մտքով չի անցել և կարիք էլ չ'կար:

ՁԱՔԱՐ. — Յետոյ ինչ օգուտ բերեցիք:

ՌՈՒԲԷՆ. — Այն որ ճանանչեցինք մեր բարեկամին ու թշնամուն:

ՁԱՔԱՐ. — Պե՛տէ փաղոց ճանախի՛ի և ոչ թէ իրար կոտորելուց և տնտեսապէս քայքայելուց յետոյ:

ՌՈՒԲԷՆ. — Մեր հարեանը այդքան քաղաքական հեռատեսութիւն չ'ունէր, եթէ ունենար այդպիսի քայլ չէր անի:

ՁԱՔԱՐ. — Իսկ դուք գիտակիցներդ: (Հեզուակալով):

ՌՈՒԲԷՆ. — Մենք, գոնէ չէինք մտածում մեր հարեանի դէմ դաւադրութիւն սարքելու:

Ե Ղ Ի. — Է՛հ, Ջաքար, փառք պետք է տալ Աստուծուն, որ այսպէս վերջացաւ:

Գ Ո Յ. — Այո, վերջացաւ, շնորհիւ սրանց պէս հերոսների: (Գնում են դեպի պատշգամբ):

ՁԱՔԱՐ. — Հերոսներ... հա՛, հա՛, հա՛:

Գ Ո Յ. — Այո, հերոսներ, բայց ոչ ձեզպէս վախկոտներ:

ՁԱՔԱՐ. — Տեսնում ես, ինչպէս է աղջիկը նրան պաշտպանում: Քեզ ասում եմ, լաւ մտածիր հետեանքների համար: Գուրում-հանց ո՞վ, մեր ազախին Չուշան՝ ո՞վ: Ես քեզ հաւատացնում եմ, որ բոլոր մեր բարեկամութիւնը իր երեսը կ'զարձնի մեզանից ու խօ-

սելու առարկայ կ'դառնանք, լաւ հասկացիր ասածներին իմաստը:

Ե Ղ Ի. — Ի՞նչ անեմ, որ ջուրն ընկնեմ... (ծնկներին խփելով)

Ձ Ա Ք Ա Ր. — Ես քեզ ասում եմ, որ քաղաքի մէջ մի մատ մեղր կ'դառնանք:

Ե Ղ Ի. — Ինձ չէ լսում, գոնէ դու խօսիր, գուցէ քո խօսքը լսի:

Ձ Ա Ք. — Կարծում ես, ինձ կ'լսի:

Ե Ղ Ի. — Կարելի է քեզանից քաշել:

Ա Ղ Ա Ի Ի Ն. — (մտնում է) Աղջիկ պարոն, սուրճը պատրաստ է:

Ձ Ա Ք. — Գնանք յետոյ կ'խօսենք:

§ Ե Ս. IX.

(ԳՈՂԱՐԻԿ և ՌՈՒԲԷՆ մտնում են)

ՌՈՒԲԷՆ. — Ինչ և իցէ հարստութիւնը ու խեղճութիւնը կեանքի հակառակ ծայրերումն են կանգնած, նրանք դժւարութեամբ են մօտենում իրար:

Գ Ո Ղ. — Իսկ եթէ մէկը սիրում է, թող թէ հարուստ լինի կամ խեղճ:

ՌՈՒԲԷՆ. — Հարստութիւնը սէր չի հասկանում:

Գ Ո Ղ. — (հակառակ) Ձէ որ սէրն էլ հարստութիւն չի հասկանում:

ՌՈՒԲԷՆ. — Այո, եթէ նա մարուր է և անկեղծ. նա ոչ մի արգելքի առջ չի կանգնում:

Գ Ո Ղ. — Արգելքը աւելի գորացնում է սէրը և կապում է սիրող սրտերը:

ՌՈՒԲԷՆ. — Բայց նիւթականը խեղդում է ամենամարուր զգացմունքները, ոսկէ կուռքը կաշկանդում է ամեն սրբութիւն... Ո՛վ ես դու, երբ քո Աստուածը այդ կուռքը չէ, դու հին աստուածների շարքում տեղ չունես:

Գ Ո Ղ. — Դու վրդոված ես խօսում, երևի հօրեղբորս վարմունքը քեզ վրդովեց, բայց եթէ դու սիրում ես ինձ՝ անուշաղիբ պէտք է թողնես նրանց բարբաջանքը:

ՌՈՒԲԷՆ. — Սիրում եմ հոգուս ամբողջ կարողութեամբ, Գոհարիկ, Գոհարիկ, դու եթէ կարողանայիր բացել այս սիրտը՝ նշա մէջ կ'գտնէիր քո պատկերը և սրտին ամեն մի ծալքում կ'կարդայիր քո անունը: Այս սիրտս բարախում է քեզ համար և քեզանով միայն երջանիկ պէտք է լինի:

§ Ե Ս. X.

(ՆՈՅՆՔ, ԵՂԻՍԱԲԷԹ և ՁԱՔԱՐ)

ՁԱՔԱՐ. — Տես նա դեռ այստեղ է, տես, ի՞նչպէս բռնել է նորա ձեռքերից... Ը՛մ... Սաքոյի տղայ... Տես քո աչքերովդ և ինձ մի մեղադրիր, սա պատիւ չի բերում իմ եղբօրս պատւանունն օջախին:

Ե Ղ Ի. — Ձգոյշ չ'լսի վատ ժամանակներումն ենք ապրում:

Ձ Ա Ք. — Գարնն լսում էք փողերի ձայնը, կարծում եմ ձեզ համար է փողեցոյցը:

ՌՈՒԲԷՆ. — (Սքախաչելով) Երկիւղը անցել է, վախենալու ոչինչ չ'կայ:

Ձ Ա Ք. — Ոչ, ինչպէս երևում է դեռ չի անցել, զգուշութիւն է հարկաւոր: Լսիր, շարունակում են:

ՌՈՒԲԷՆ. — Էս կուի մի որևէ վտանգի փողակոյշը չէ:

Գ Ո Ղ. — պ. Ռուբէնը կարծում եմ աւելի լաւ պէտք է գիտնայ քան թէ դուք:

ՌՈՒԲԷՆ. — Ինչէկիցէ զնամ տեսնեմ... թէև գիտեմ բան չ'կայ: Տօնսութիւն ձեզ: (Գրուխ սաղով գնում Գոհարիկի հետ միասին)

Ձ Ա Ք. — Չ'ը, հ'ը, ... թող հայրդ կենդանի լինէր ու տեսներ այս ամենը ով գիտէ կտոր-կտոր անէր երկուսիդ: (Գոհարիկը հետ գնալով) (Գոհարիկին) Եղիսաբէթը դուրս է գնում վրդոված: Գնաց պարոնը:

Գ Ո Ղ. — (Սառնորքեամբ) Այո:

Ձ Ա Ք. — Հա շուտ-շուտ պիտի այցելի այս տունը:

Գ Ո Ղ. — (Վիրաւորած) Այդ ի՞նչ հարցէ, ես չեմ հասկանում:

Ձ Ա Ք. — Այնպէս եմ հարցնում, մի՞թէ՛ ես իրաւունք չ'ունեմ հարցնելու:

Գ Ո Ղ. — Ձեր իրաւունքից դուրս բան է հօրեղբայրս:

ՁԱՔ. — Ինչպէս մի՞թէ հանգուցեալ հայրդ իմ եղբայրս ձեր բոլորի խնամքը իմ վերաս չ'թողեց:

Գ Ո Ղ. — Այո երբ ես փոքրէի ու խնամքի կարօտ:

Ձ Ա Ք. — Իսկ այժմս:

Գ Ո Ղ. — Այժմս, վերջացել է ձեր խնամակալութիւն և ոչ մի իրաւունք այլևս... հօրեղբայրս, գնացէ՛ք ձեր տունը հովանաւորեցէ՛ք... բաւական է, վերջապէս...

Ձ Ա Ք. — Ահա, քեզ բան... ըհը.. մի հարց. ասա՛, խնդրեմ ի՞նչ նպատակ կայ Սաքոյի տղի հաճախ այցելութիւնը ձեր տան:

Գ Ո Յ. — Զարմանալի բան, այդ էլ ձեր խնամքին է յանձնուած:  
Զ Ա Ք. — Ոչ, մեր բարեկամները ուզում են իմանալ իրանց  
ապագայ բարեկամին:

Գ Ո Յ. — Բարեկամներ, մինչ առաջին դժբախտութիւնը և քան  
զցածէ ճոխ սեղանը:

Զ Ա Ք. — Առանց բարեկամի չէինք կարող մնալ:

Գ Ո Յ. — Ես լաւ գիտեմ այդ բարեկամները ինչ լինելը, թող  
նեղութիւն չքաշեն այդ բանի համար:

Զ Ա Ք. — Զարմանում եմ...

Գ Ո Յ. — Վերջապէս, ես ասում եմ, որ խնամակալ չեմ ցան-  
կանում գլխիս բուական է... (Դուրս է ուզում գնալ):

ԵՂԻՍԱՔԵՐԻՑ — (Մտնում է):

Զ Ա Ք. — (Եղիսաքէրի) փառք Աստուծոյ ձեր տանու թշնամի  
էլ դարձայ:

Գ Ո Յ. — Խնդրեմ, հօրեղբայս ձեր տան ցաւերով զբաղէք:

Զ Ա Ք. — Լսում ես:

Ե Ղ Ի. — Ինչո՞ւ համար է այս վիրաւորանքը:

Զ Ա Ք. — (Նեղացած) Եթէ քեզ հաճելի չէ իմ բարի խորհուրդ-  
ներս, ես մեղայ Աստուծոյ: Եղիսաքէթ, որովհետև, Գոհարիկը այ-  
ժրմս իրան չափահաս է համարում, այս օրւանից ես հրաժարում  
եմ խնամակալութիւնից: Գուցէ Սաքոյի տղան...

Գ Ո Յ. — (Բարկացած) Խնդրեմ, հօրեղբայրս... (Դուրս է գնում)

Անագնիւ...

Զ Ա Ք. — (Սպառնալով ու բեխերը ոտրելով) շատ լաւ, կ'տես-  
նենք Սաքոյի տղայ... (Եղիսաքէրը գլխին խփելով նստում է):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր .

# ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.

## ՆՈՅՆ, ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՏԵՍԱՐԱՆ

ՏԵՍ. I.

(Դոհարիկը բացում է յուսանոսք ու շխտը նայում է դէպի պար-  
տէզը):

ԳՈՀԱՐԻԿ. — Փոթորիկը անցաւ, և ամեն ինչ խաղաղեց և մենք  
մնացինք երկուսով, (երկու ձեռքից բռնելով ա՛յնպէս չէ երկուսով.  
նախ հայրենիք, ապա սէր, սէրը ոգևորում է հայրենիքի փրկու-  
թեան ժամին: Մի անձ ունէի նրա փրկութեան համար և մէկ սիրտ  
սիրածիս համար: Երկուսիս սէրն էլ զօրեղ է, երկուսիս սէրն էլ  
ազնուացնում է մարդուն և մի՞թէ կարող է մէկը արգելք հան-  
դիսանալ այդ ճանապարհին:

Գ Ո Յ. — Ոչ որ, եթէ կան խոչնդոտներ, նրանք չեն կարող  
արգելք լինել մեր սիրոյ մէջ, սէրը ամեն արգելք ոչնչացնում է:

ՌՈՒԲԷՆ. — Բայց ի՞նչու է մօրդ անբաւականութիւնը, մանա-  
ւանդ հօրեղբորդ անհաճոյ նկատողութիւնները ու արհամարական  
տօնը:

Գ Ո Յ. — Ոչ մի արժէք պիտ չ'տալ նրանց նկատողութիւններին:  
ՌՈՒԲԷՆ. — Գուցէ նորա համար, որ մայրս իր աշխատանքի  
համար վարձատրութիւն է ստացել:

Գ Ո Յ. — Փառք ու պարծանք մօրդ, որ իր ազնիւ աշխատան-  
քով կրթել է իր որդոց և նրանց գողութեան չէ վարժեցրել:

ՌՈՒԲԷՆ. — Մօրդ կարելի է հաշտեցնել կատարած իրողու-  
թեան հետ, զլիաւորներ կատարում է հին ոստիկանը, որ գուզում  
է մօրդ:

Գ Ո Յ. — Ես կ'կտրեմ նորա ոտը մեր տանից: (Մօտենալով  
դաշնամուրին) իմ վերաս խնամակալութիւնից արդէն հեռացրի:  
(խփելով ակկորդներ) ոչ մի դիտոնանս պէտք է չ'լինի մեր կեանքի  
մէջ. դիտոնանսը անհաճելի է ականջին:

ՌՈՒԲԷՆ. — Մանաւանդ սիրոյ զգացմունքներին առաւելապէս:  
Գ Ո Յ. — Յիշում ես այս բօմանսը. „Սիրում եմ քեզ իմ անու-  
շիկ վարդ“ (կամ երգել մի օրև է բօմանս) շատ անգամ եմ ոգե-  
ւորել այդ երգով ու անսահման զմայլել:

ՌՌԻԲԷՆ.—Այդ երգը իմ ոգևորած մոմենտի արտայայտութիւնն է:  
Գ Ո Հ.—(Երգում է), որ աւետում է ինձ մի նոր կեանք, եր-  
ջանիկ օրեր, օրեր խնդութեան: Երկի գգում էր սիրտդ մեր եր-  
ջանիկ օրերի համար:

ՌՌԻԲԷՆ.—Ես կասկածում էի, որ երբևիցէ կարող եմ գտնել  
և բեզ հետ մի ըոպէ պատահել ու խօսել՝ յաւիտենական երջան-  
կութիւն էի համարում:

Գ Ո Հ.—Մեր սէրը յաւիտենական է: (Երեւում է Եղիաւրեբը  
վերկենալով): Գնանք պարտէզ՝, այստեղի մթնոլորտը ծանր է, ու  
ճնշում է ինձ: (Գնում են)

§ Ե Ս. II.

•(ԵՂԻՍԱԲԷԹ և ապա ԱՂԱՍԻՆ)

ԵՂԻՍԱԲԷԹ. (Մտնում է նեղացած) Նունէ, Նունէ... ո՛ր է կորել  
այս անպիտան աղախինը. Նունէ, Նունէ:

ԱՂԱՍ.—(Մտնում է) Ի՛նչ կայ աղջիկ պարոն:

Ե Ղ Ի.—Ու՛ր ես կորել, շատ կանչելով հարեաններն էլ իմա-  
ցան, ո՛ր է օրիորդը:

ԱՂԱՍ.—Չգիտեմ, կարելի է պարտիզումն է:

Ե Ղ Ի.—Գնա՛, ասա՛, որ աղջիկ պարոնը կանչում է, թող շու-  
տով գայ... Սպասիր, լսիր, հեռու մօտիկից ուշադրութիւն դարձրու,  
լսիր թէ ինչ են խօսում... հասկացար:

ԱՂԱՍ.—Հասկացայ:

Ե Ղ Ի.—Իսկ եթէ կասին՝ թէ ինչու համար ես եկել, կասես,  
որ ծաղիկներ քաղելու, հասկացար...

ԱՂԱՍ.—Այո... (Գնում է)

Ե Ղ Ի.—Գէ, գնա... (Մենակ) Գարձեալ Գէորգեան, Չուշան,  
Սարօ... ուղղակի սիրտս տակն ու վրայ է լինում, ես չեմ կարողա-  
նում լսել այդ անունները: Մի ըոպէ անգամ, որ երեւակայում եմ,  
թէ իմ աղախին Չուշանը իմ խնամիս պէտքէ լինի, որ ես ու նա  
իրար կողքին նստած մեր բարեկամների հետ և նրանք արհամա-  
րանքով ու հեզնանքով պէտք է նային մեզ, նրանք պէտք է մեզ ծաղ-  
րի առարկայ դարձնին և խորշելով ձեռք մեկնեն որպէս բարեկա-  
մին... Այդ անտանելի է... ասանք աղջիկս խելքը կորցրել է և չի  
ուզում սթափելի իր սխալանքից, իսկ ես... ես խելքս չեմ կոր-  
ցրել և ես չեմ թոյլ տայ, որ իմ տունս ծաղրի ենթարկի:

ԱՂԱՍԻՆ.—(Մտնում է) օրիորդն ասաւ, որ այս ըոպէիս գալու է:  
Ե Ղ Ի.—Ի՛նչ էին խօսում:

ԱՂԱՍ.—Ոչինչ չլսեցի:

Ե Ղ Ի.—Ուղիղն ասա:

ԱՂԱՍ.—Ինձանից չեմ կարող հնարել:

Ե Ղ Ի.—Նունէ, լսի՛ր, այս ըոպէիս գալու են իշխան Փերուզ-  
եանը ու նրա մօրեղբայր իշխան Սաֆիրեանը: Սուրճի պատրաս-  
տութիւնը տես, ամեն ինչ սարքին լինի:

ԱՂԱՍ.—Կաշխատեմ: (Գնում է)

ԵՂԻՍԱԲԷԹ.—(Մենակ) Մի՛թէ վայել է մեր տանը, որ Գուլում-  
եանցի աղջիկը, կորցնի իր նամուսը ու գնայ առանձնանայ այգում  
ու գաղտնի զրոյցների ու սիրային բացատրութիւնների մէջ մտնի...  
Ես չեմ կարող այս անպատուաբեր գործը տեսնել, ես կ'սպանեմ  
ինձ: (Արտաւում է)

§ Ե Ս. III.

(ՆՈՅՆ և ԳՈՀԱՐԻԿ ու ՌՌԻԲԷՆ).

Գ Ո Հ.—Մայրիկ, դու լաց ես լինում:

Ե Ղ Ի.—Ինչպէս լաց չ'լինեմ, երբ տանս մէջ այնպիսի բաներ  
է կատարում, որ վայր է ձգում իմ տանս պատիւը:

Գ Ո Հ.—Ի՛նչ է պատահել, որ պատճառ է եղել արտասուներիդ:

Ե Ղ Ի.—Աւելի ծանր՝ քան արտասուքներս. նամուսը, իմ  
տանս արթ ու զարթն է եղել ու ամենամեծ պարծանք, իսկ այժմս...

Գ Ո Հ.—Իսկ այժմս՝ ո՞վ է խախտել ու ոտքի տակ տուել այդ նա-  
մուսը, շատ հետաքրքիր է իմանալ:

Ե Ղ Ի.—Անհամապատասխան մարդու ներկայութիւնը.

ՌՌԻԲԷՆ.—Տիկին մի գուցէ ես եմ խանգարում.

Ե Ղ Ի.—Այո, գուր, պ. Գէորգեան, դուք էք խանգարում մեր  
տան անդորրութիւնը:

Գ Ո Հ.—Ոչ, մայրիկ, դա զրպարտութիւն է:

ՌՌԻԲԷՆ.—(Քաղցրորեալ) Ներեցէք, ես ինքս նախանձախն-  
դիր եմ ուրիշների պատի, ոչ թէ ես՝ մուրէն Գէորգեանս թոյլ  
տամ ուրիշի տան պատիւը շղջափելու, նամանաւանդ այն ընտա-  
նիքի, որը արժանի է ամեն յարգանքի:

Ե Ղ Ի.—Չատ շնորհակալ եմ, ձեր ասած յարգանքի համար.  
միայն մենք տարբեր կէտերումս ենք կանգնած և չի կարող մեր  
մէջ կապ լինել, դուք ուրիշ էք մենք ուրիշ:



ՌՈՒԲԷՆ.—Ներեցէք տիկին, ես այնպիսի մի յանցանք չեմ գործել, որ մարդիկ ինձ տան դուռը ցոյց տան:

Գ Ո Յ.—Մայրիկ, սա ի՞նչ անպատշաժ խօսակցութիւն է:

Ե Ղ Ի.—(Բարկացած) Գու լռիր, այդ քո գործը չէ:

Գ Ո Յ.—Մայրիկ, խնդրեմ անտեղի խօսակցութիւններ չլինեն:

Ե Ղ Ի.—Գուցէ քեզ համար աւելորդ են, բայց ինձ համար, ոչ:

ՌՈՒԲԷՆ.—Տիկին...

Ե Ղ Ի.—(Բարկացած) Ես ձեզ ասում եմ, պարոն, գնացէք, մտէք այն տունը, որ համապատասխանում է ձեզ: Եթէ մի որեւէ աշխատանք ունէք այս տան վերայ, մէկի տեղ տասը կ'վճարեմ, միայն թէ թողնէք մեզ հանգիստ:

ՌՈՒԲԷՆ.—Ես չեմ հասկանում ձեզ, և ձեր ասածները ինձ տարորինակ է թուում այստեղ ոչ փողի հարց կայ և ոչ էլ վարձատրութեան:

Ե Ղ Ի.—Միով բանիւ, հեռացէք մեզանից, այս է իմ խնդիրքս:

ՌՈՒԲԷՆ.—Ես ձեզ հետ ոչ մի հաշիւ չունեմ, ես կարողեմ հեռանալ այս տանից, բայց ոչ նրանից, որի հետ կապւած է սիրտս, որին բաժանել ոչ մի մարդկային ձեռք չի կարող, դա է իմ սրբազան ուխտս:

Ե Ղ Ի.—Ի՞նչէք ասում, կարծում էք այն մէկը տէր չունի...

ՌՈՒԲԷՆ.—Այո, նա տէր ունի և նրա տէրը ես եմ:

Ե Ղ Ի.—Ոչ, չէք կարող նորա տէրը լինել, ուստի, պահանջում եմ հեռացէք այս ընկալիս:

ՌՈՒԲԷՆ.—Ես գնում եմ, բայց իմ խօսքս՝ ես կ'հաստատեմ: Գնացի, ցտեսութիւն, Գոհարիկ: (Գնում է) Գոհարիկը ետեւից գնում է եւ վերադառնում: (Նշխարէքք ման է գալիս բորբոխած):

Ե Ղ Ի.—(Գոհարիկին) գնաց պարոնը

Գ Ո Յ.—Այո, գնաց, հանգստանցար, հանգստացաւ սիրտդ:

Ե Ղ Ի.—Ես քեզ ասում եմ, որ ես չեմ թոյլ տայ, որ իմ աղախինը իմ բարեկամս դառնայ ու իմ կողքիս նստի, դու հանկանում ես:

Գ Ո Յ.— Ես ամեն ինչ լաւ եմ հասկանում թէ ի՞նչ է կատարւում մեր տան մէջ:

Ե Ղ Ի.—Եթէ դու հասկանայիր, կ'տեսնէիր թէ քո տանդ պատի համար ինչ ծաղրանկար ես պատրաստում:

Գ Ո Յ.—Քաւ լիցի, դու ես, որ դատարկաշրջիկներն ու խեղկատակներն համար ուզում ես գոհել ինձ, դու ուզում ես գոհել քո օրգուկ այն տղրուկներին, որոնք ուզում են ուրիշի հաշիւն ապրել և միշտ էլ այդ պատարարոյժ իշխաններդ ապրել են որպէս

ձրիակներն: Ես տեսնել չեմ ուզում դրանց, ես ասում եմ այդ կարգի մարդկերանց: Ես համակրում եմ Ռուբէն Գէորգեանին, որպէս աղնիւ աշխատասէր երիտասարդի...

Ե Ղ Ի.— Ուրեմն դու վճռել ես Սարոյի տղին զնայու:

Գ Ո Յ.—Այդ իմ գործս է:

Ե Ղ Ի.—Լաւ, տեսնենք, ի՞նչ կ'լինի վերջը...

ԱՂԱՍ.—(Մտնում է) Իշխան Փերուզեան և իշխան Սաֆիրեան:

Ե Ղ Ի.—Ներս հրաւիրիր:

Տ Ե Ս. IV.

(ՆՈՅՆՔ և ԻՂԻԱՆՆԵՐ՝ՓԵՐՈՒՋԵԱՆ և ՍԱՓԻՐԵԱՆ)

ԳԱԻԹ.—Ահ, բարև ձեզ տիկին Եղիսաբէթին, յարգանքներս օր. Գոհարիկին:

Գ Ո Յ.—(Սառնորթեամբ) Բարև:

ՍԱՓԻՐ.— Ոտս չորախի տալով՝ հազիւ կարողացայ բարձրանալ այս սանդուխները... Բարև ձեզ տիկին Եղիսաբէթ, ահ, բարև ձեզ աղջիկս:

Ե Ղ Ի.—Բարև ձեզ իշխաններ:

Ս Ա Փ.—Քանի տարիներ է ձեր տուն չէի եկել:

Ե Ղ Ի.—Այո իշխան, մեզ մոռացել էք:

Ս Ա Փ.—Ձեզ մոռանալ, ոչ երբէք, հիւանդութիւնս է, որ ձեռք ու ոտքս կապել է... այժմս ոչինչ, լաւ եմ ինձ զգում իսկ առանջ, ով կ'կարծեր որ ես կ'ենդանի կ'մնամ... հ'ը հ'ը հ'ը...

Ե Ղ Ի.—Է՛հ փառք Արարչին, որ այն դրութիւնից ազատել էք, իշխանուհին շատ անգամ է պատմել Ձեր հիւանդութեան մասին:

Ս Ա Փ.—Ա՛հ քանի տարի է չեմ տեսել օր. Գոհարիկին, արի մօտս. մի տեսնեմ... ուղղակի ճանաչել չի լինում, կատարեալ աղջիկ է զարձի, ուղղակի ճանանչել չի լինում, կատարեալ հարսնացու է... հա՛, հա՛, հա՛, պէտքէ ասած աղջկերբը շուտ են մեծանում: Է՛հ ժամանակ է... տիկին Եղիսաբէթ:

Ե Ղ Ի.—Ինչպէս, որ Աստուած կ'կամենայ:

Ս Ա Փ.—Գեռ մենք պէտքէ կամենանք՝ յետոյ էլ Աստուած, այնպէս չէ՛ օրիորդ Գոհարիկ:

Գ Ո Յ.—Երևի:

Ս Ա Փ.—Իմ կարծիքով ամուսնութիւնը կեանքի այն մեծ օղակն է, որ կապում է սկիզբը ու վերջը:

Գ Ո Ն. — Մի՛թէ անհրաժեշտ է այդ, ես ուզում եմ կուսանոց մտնել:

ԴԱԻԻԹ. — Ես վճռել եմ վարդապետ դառնալ: (ծիծաղում եմ)

Ս Ա Փ. — (ծիծաղելով) Ձեզ համար վանքում տեղ չ'կայ, դուք պէտք է ընտանիք կազմէք, հասարակութեան լաւ անդամներ տաք, թէ չէ վանքում... այժմս վարդապետները վանքից փախչում են, դուք ուզում էք մտնել, հ'ը, հ'ը...

Գ Ո Ն. — Իրաւ էք ասում իշխան, ուղիղ է Ձեր բոլոր փիլիսոփայութիւնները...

Ս Ա Փ. — Ես իրականութիւն եմ ասում, թէ ես հին կլասիկ եմ ու սիրում եմ հին փիլիսոփայութիւնները... հ'ը, հ'ը...

ԴԱԻԻԹ. — Ամուսնութեան հիմնական միտքը սէրն է:

Ս Ա Փ. — Սէրը ընտանիքի ծածկոցն է, որ ամեն տեսակ փոթորիկներից պահպանում է որտեղ սէր չ'կայ, այնտեղ էլ կեանք չ'կայ:

ԱՂԱԽ. — Տիկին...

Ե Ղ Ի. — (Վերկենալով) պատրաստ է:

ԱՂԱԽ. — Այո սուրճը պատրաստ է:

Ե Ղ Ի. — Խնդրեմ իշխան Խոսրով: (Գնում եմ)

Ս Ա Փ. — Թող երիտասարդները խօսեն, այժմս դրանց կեանքի պարունն է... հ'ը, հ'ը... մենք (Յիսապետի) կեանքի ձմեռ ենք, մեզանից սառնութեան քամին է բարձրանում, հ'ը, հ'ը... (Գնում եմ)

Տ Ե Ս. V

(ԳՈՀԱՐԻԿ և ԴԱԻԻԹ)

ԴԱԻԻԹ. — Տե՛սնում էք, ինչպէս է ճառում իմ մօրեղբայրս:

Գ Ո Ն. — Այո ճառում էք.

ԴԱԻԻԹ. — Չնայելով նրա հասակին, նա թէև այնքան տարիք ունի, 65-ից անց է բայց նա կայտառ է և ուրախ, միայն նա տանջում է վէրքերից, նա հին հերոս է:

Գ Ո Ն. — Հօրս հետ միասին միևնոյն կուում վիրաւորել են:

ԴԱԻԻԹ. — Նրանք մօտիկ ընկերներ են եղել:

Գ Ո Ն. — Գիտեմ: Հայրս էլ մեռաւ ծանր վէրքերից, քանիցս նա անդամհատութեան է երթարկել:

ԴԱԻԻԹ. — Դուք սիրում էիք ձեր հօրը:

Գ Ո Ն. — Ամեն բանից առաւել: (Արտասելով)

ԴԱԻԻԹ. — Արդեօք, եթէ մէկին սիրէիր և կորցնէիր, նոյնպէս՝ այդպէս կ'արտասուէիր:

Գ Ո Ն. — Օրինակ հօրս, այո կ'արտասուէի:

ԴԱԻԻԹ. — Խօսքս ծնողների մասին չէ, դրա մասին երկու կարծիք չի կարող լինել:

Գ Ո Ն. — Ինչո՞ւ չէ, սիրել եմ և սիրում եմ:

ԴԱԻԻԹ. — Թէև կնոջ բերանում դա սովորական ձեռք է հնչում:

Գ Ո Ն. — Կարծում էք, երևում է քիչ էք ուսումնասիրել կնոջ սիրար, դուք էլ տղամարդիկդ պատրաստ էք ամեն մի պատահած աղջկան նոյնը կրկնելու, սիրում եմ ձեզ և այլն:

ԴԱԻԻԹ. — Ոչ երբէք, ես վերին աստիճանի ինքնասէր եմ, որպէսզի ամեն մի պատահած աղջկայ առաջ բացեմ սիրտս. ուրիշ էք դուք, անկեղծ խոստովանած, ես ձեզ սիրում եմ եւ սիրում էի աշակերտական ժամանակից:

Գ Ո Ն. — Սիրում էիր, զու՞ր:

ԴԱԻԻԹ. — Այո, սիրում էի և...

Գ Ո Ն. — (ծիծաղելով) Հա՛, հա՛, հա՛:

ԴԱԻԻԹ. — Այո, սիրում եմ և այդ սիրոյ համար կ'զոհէի ամեն բան. կեանք, իշխանութիւն, հարստութիւն:

Գ Ո Ն. — Մի ծիծաղէք իշխան: Դուք այն տասցէք, ամբողջ օրը ինչո՞վ էք պարապած: (Գնալով) դէպի սեղանատուն:

ԴԱԻԻԹ. — Համարեա, ոչնչով:

Գ Ո Ն. — Անգործութիւնը վատ բան է իշխան, նա չարիք է:

ԴԱԻԻԹ. — Ինչո՞ւ է չարիք, ապա, ծառաները ինչո՞ւ են փող ստանում:

Գ Ո Ն. — Ոչ իշխան, ամեն մարդ պարտական է աշխատելու և ոչ թէ ուրիշի բրտինքով ասլրելու: (գնում եմ):

Տ Ե Ս. VI

Դոնաուիկը շտապով դուրս գալով նայում է լուսամտից եւ կարծես նկատելով մի բան, դուրս է գնում:

(Մտնում եմ իշխան Սարիբեանը եւ Դարիքը):

ՍԱՓԻՐ. — Հը, պատմիր տեսնեմ, ի՞նչի մասին էիր խօսում:

ԴԱԻԻԹ. — Խօսեցինք սիրոյ մասին...

ՍԱՓԻՐ. — Սիրում եմ քեզ, ամեն բանից վեր է քո սէրը և այլն...

ԴԱԻԻԹ. — Այո, շատ բաներ խօսացինք և...

**ՍԸՓԻՐ.**—Ապրես, դէրդ լաւ ես կատարել: Պէտք է ասեմ, որ տիկին Եղիսարէթի ուրախութեան չափ չկայ, նա քեզ շատ է հաւանում, նամանաւանդ, որ իշխանական անունդ ամեն ինչ զլուխ կ'ըբերի. նա ուզում է, որ իշխան լինի իր փեսան և ոչինչ չի խնայի, պէտք է ասեմ քեզ, որ հարիւր հազարի մօտ օժիտ ունի:

**ԳԱԻԻԹ.**—(Ռուսի) Ի՛նչ ես ասում, հօրեղբայրս:

**ՍԸՓԻՐ.**—Իհարկէ, մեզ էլ այդ է հարկաւոր, մեր սնկացած զբոսականներ ու քայքայւած տնտեսութիւնը այս միջոցով միայն կարող ենք վերականգնել:

**ԳԱԻԻԹ.** Ուր է, անի, երանի թէ շուտ իրականանար ու մեր բազմանքին հասնէինք:

**ՍԸՓԻՐ.**—Մի վախի՛ր, ես դատարկ ամանում մատս չեմ կոխել...

§ Ե Ս VII

(Նոյն և Եղիսարէթ)

**ԵԳՐՍԱՐԷԹ.**—(Ձսապով ներս գալով) Ներեցէք իշխաններ, որ ես ձեզ մենակ թողի:

**ՍԸՓԻՐ.**—Խնդրեմ, մենք տանու մարդիկ ենք, հ'ա, հ'ա, հ'ա:

**ԵԳՐՍԱՐԷԹ.**—Էէ ինչ ասել կուզէ:

**ՍԸՓԻՐ.**—Գաւիթն էլ այսօրանից ձեր որդին պէտք է հաշէք:

**ԵԳՐՍԱՐԷԹ.**—Անկասկած, մեր տան զրնեքը բաց են ձեր արաջ:

**ՍԱՖԻՐ.**—Չատ շնորհակալ ենք տիկին Եղիսարէթ:

**ԵԳՐՍԱՐԷԹ.**—Ես ոչինչ չեմ խնայիլ իշխան Գաւիթի համար:

**ԵՐԿՈՒՍՈՎ (Ռուսի)** Չատ շնորհակալ ենք:

**ՍԱՖԻՐ.**—Կորած տեղ չէք տալ, թագաւորի տան վայել ազայ է:

**ԵԳՐՍԱՐԷԹ.**—Արժանաւորը՝ արժանաւորին է գտել:

**ՍԱՖԻՐ.**—Անկասկած: Էհ, գնանք որդիս, տուր փայտս: (Տալիս է)

**ԳԱԻԻԹ.** Ցտեսութիւն տիկին Եղիսարէթ:

**ԳԱԻԻԹ.**—Ցտեսութիւն: (Ձեռքը հանքուրեղով): Օրիորդին ջերմ բաններս:

**ԵԳՐՍԱՐԷԹ.**—Ցտեսութիւն: (Ճանապարհ է ձգում): Օրիորդը երեկ գործ է ունեցել ու գնացել է: (Գնում եմ):

§ Ե Ս VIII

(Նոյն և Ջաֆար:)

**ՋԱՋԱՐ.**—Կանչել էիք, հը, ի՛նչ բան կայ:

**Ե Գ Ս.**—Ոչինչ, իշխան Սաֆիրեանը ու Գաւիթը այստեղ էին:

**Ջ Ա Ք.**—Ափսոս, չ'տեսայ:

**Ե Գ Ս.**—Մի ոտ առաջ գայիր՝ կտեսնէիր:

**Ջ Ա Ք.**—Ես գնացել էի շուկայ տան համար բան-ման գնելու... Յետոյ, բան խօսեցիր:

**Ե Գ Ս.**—Գիտեմ կուրախանաս, թագաւորը քեզ արժանացրել է վաղիմիրի:

**Ջ Ա Ք.**—Իր՞աւ:

**Ե Գ Ս.**—Այո պաշտօնապէս յաղորդւած է:

**Ջ Ա Ք.**—(Ձեռքերը շփելով) Փառք Ալլահին, թագաւորի ուշադրութեանն էլ արժանացայ: Բայց ականջներին չեմ հաւատում, իրաւ ես ասում:

**Ե Գ Ս.**—Ապա, ինչ, հանար եմ անում:

**Ջ Ա Ք.**—Ասում ես, որ պաշտօնապէս յայտարարւած է:

**Ե Գ Ս.**—Այո, այո, այդպէս ասաց իշխան Խոսրովը:

**Ջ Ա Ք.**—Այ, ես հասկանում եմ այսպիսի բարեկամներ ունենալը: Մի խօսք էր հարկաւոր, չէ որ մեծ մարդիկ իրանց խօսքերը իզուր տեղ չեն գործ դնում, չէ Սաքօի խօսքը կունենայ նշանակութիւն:

**Ե Գ Ս.** Գու էլ շուրջ սալօրի հետ համեմատեցիր:

**Ջ Ա Ք.** Միով բանիւ, զրանք պատիւ են բերում մեր տանը:

**Ե Գ Ս.** Նրանք շատ սրտով են ուզում Գոհարիկին և համարեա թէ ամեն ինչ վերջացած է. օժիտ 50,000 ռ. ու չորս սենեակի սարք ու կարքը, ու ներքին յարկը տայիս եմ բանի որ կենդանի եմ, իսկ իմ մահից յետոյ ամեն ինչ զրանցն է ու զրանց, ով ունիմ ուրիշ ժառանգ:

**Ջ Ա Ք.** Իհարկէ, չէ Գայեանեան, Ներսեսեան աղքատների որդկերանց, չէ այդպիսի բան չանես:

**Ե Գ Ս.** Էդ ամեն լաւ, բայց...

**Ջ Ա Ք.** Բայց ինչ:

**Ե Գ Ս.** Գոհարիկին պէտք է համոզել, հէնց այն է պնդում, որ ինքը ուզում է կուսանոց մտնել, որ մտադրութիւն չունի մարդու գնալու և էլ ինչ ասեմ...

**Ջ Ա Ք.**—Չ'հաւատաս, զլխիդ տակը փափուկ բարձեր է ուզում զարսել ու քեզ քնացնել, իսկ ինքը իր բանը կ'տեսնի. երեկ երեկոյեան հուփստն տեսել էր երկուսին Գոլովինսկի պրօսպէկտում: Տես, Եղիսարէթ որ մի դժբախտութիւն չ'ըբերի զուխդ և ամօթով չ'մտանք այդ իշխանների առաջ:

**Ե Գ Ս.**—Ես էլ այդ եմ մտածում, զարմանում եմ, ես ես կարգալ գրել գիտեմ ու գիտեմ աշխարհիս չաբն ու բարին, բայց ոչ

մի ժամանակ ծնողներս հակառակ չեմ գնացել, չէ որ նրանք ինձ համար վատ չեն ցանկացել:

Ձ Ա Ք. — Ապա, թող իմ աղջկերբը համարձակւին խօսքս չկատարելու, վայն եկել է ու տարել նրանց:

Ե Ղ Ի. — Գոհարիկս էլ միշտ լսող է եղել, բայց այժմս չեմ հասկանում ինչ Աստուած է խրով կացել:

Ձ Ա Ք. — Հասկացիր, Սաքոյի տղան այնպէս է խելքից հանել, որ հագիւ թէ դու կարողանաս կտորել նրա կամբը:

Ե Ղ Ի. — Լաւ, ինչ անեմ:  
Ձ Ա Ք. — Ինչ պիտի անես, ինչ է՛ Սաքոյի տղին ես տալու:  
Ե Ղ Ի. — (Վեր քոյնքով սեղից) Գեո խելքս հացի հետ չեմ կերել, որ...

Ձ Ա Ք. — Խեղճ կին, Գոհարիկը իր վարմունքով քեզ խելագարութեան կհասցնի:

Ե Ղ Ի. — Սուտ էլ չես ասում, վայ իմ գլխիս (խփում է գլխին):  
Ձ Ա Ք. — Ինչես գլուխդ ծեծում:

Ե Ղ Ի. — Բա գլուխս ծեծելու չէ... համա ականջիս մի բան ընկաւ:  
Ձ Ա Ք. — Ինչ:

Ե Ղ Ի. — Այն, որ, Սաքոյի տղան է՛ ինչ գահրումար է, գնում է Գերմանեա ուսանելու:

Ձ Ա Ք. — Ով ասաց քեզ:  
Ե Ղ Ի. — (Մտածելով) Հա, կարծեմ Նունէն ասաց, մի կանչեմ, հարցնեմ տեսնեմ: (կանչում է) Նունէ, Նունէ: (մտնում է աղախիկը):

Ե Ղ Ի. — Գու այսօր մի բան ասիր թէ, իբր Ռուբէն Գէորգեանը գնում է Գերմանեա սովորելու:

Ա Ղ Ա. — Այո աղջիկ պարոն, այդպէս ասաց օրիորդը:  
Ձ Ա Ք. — Որ նա գնում է սովորելու:

Ա Ղ Ա. — Այո, այդպէս ասաց:  
Ձ Ա Ք. — Լաւ, գնա: Հր հը՛, ասա խնդրեմ, Սաքոն ինչ սեքար ունի, որ նա իր տղին ուղարկում է արտասահման սովորելու:

Ե Ղ Ի. — Ով գիտէ:  
Ձ Ա Ք. — Տեսնում ես, Եղիսարէթ, ինչ օրեր են գալիս, որ բաշալ դալալ Սաքօն իր տղին արտասահման է ուղարկում սովորելու, տեսնում ես, մարդիկ իրանց վերմակի չափ չեն ձգում իրանց ոտը: Երևի գողցած փողեր կունենայ:

Ե Ղ Ի. — Էլ այժմս ում տղան ու աղջիկը չեն գնում Պետրբուրգ ու Մոսկով սովորելու, երեկայ տրեխաւորները այսօր բժիշկներ ու փաստաբաններ են դարձել:

Ձ Ա Ք. — Ապա, ինչու ես իմ տղերանց ու աղջկերանց չկարողացայ ուղարկել, ինքս կօլեժսկի ընդհատուորը, տուն ունիմ, բրէհներ եմ ստանում, այժմս էլ վլադիմիրը պիտի ստանամ, սաքիչ բան չէ, չէ Եղիսարէթ, նա անպատճառ գողցած փողեր կունենայ:

Ե Ղ Ի. — Ո՛վ կարող է մարդկանց զաղտնիքը իմանալ:  
Ձ Ա Ք. — Օրհնւած, դեռ Գրիստոսին չտեսած խելքով ճանանչեցին, շատ պարզ է էլի, բայց մի մի անգամ այն սրտի եմ գալիս, որ, մի որևէ չաթու քեսանին մի 100 բուբլի խոստանամ ու Սաքոյի տղին...

Ե Ղ Ի. — Աստուած մի արասցէ, ուզում ես կրակի մէջ ընկնենք:  
Ձ Ա Ք. — Էդպիսիներին եմ զրկել, կ'ասեմ սօցիալիստ է, անարխիստ է, պրծաւ գնաց, ով դիտէ մի Անեա էլ ստանամ:

Գ Ո Հ. — Չէ, չէ, Չաքար, թէ գիտես ուրիշ բան ասա: Ես չգիտեմ վաղը ինչ պատասխան տամ իշխաններին, ես այդ եմ մտածում:

Ձ Ա Ք. — (Հեռ ու առաջ մտն գալով) Հա, Եղիսարէթ մի իմացիր, թէ երբ է գնում:  
Գ Ո Հ. — Այդ հեշտ է իմանալ:

Ձ Ա Ք. — Լաւ, ես այնպէս խառնեմ զրանց գլխները, այնպիսի ատելութիւն ձգեմ զրանց մէջ, որ ինքը սատանան գլուխը կորցնի:  
Ե Ղ Ի. — Պէտք է թիլիսմա անել տանս:

Ձ Ա Ք. — Ես այնպիսի օյին սարքեմ, որ հարիւրաւոր թիլիսմանները չ'կարողանան կծիկի ծայրը գտնել: Միայն մի բան, այս Նունէին պէտք է հեռացնես, թէ չէ սա կարող է իմանալ իմ գաղտնիքներս, չէ որ դա շատ սիրում է Գոհարիկին:

Ե Ղ Ի. — Այդ ճիշտէ, մի առժամանակ կուղարկեմ գիւղը:  
Ձ Ա Ք. — Այդ լաւ կ'անես: Գէ՛հ, այժմս տես Սաքոյի տղայ (բռունցքը սեղմելով եւ սպառնալով) այնպիսի օյին սարքեմ գլուխդ... որ Բերլինի ճանապարհը կորցնես:

Ես գնացի, գործից ուշացայ: (Գնում են)

(Վ Ե Ր Ը Գ Ո Յ Ի.)

### ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ:

(Չաքար և իշխան Գաւիթ)

Բեմը ներկայացնում է պարտէզ: Չախ կողմը սեղան, նստարաններ: Բեմի խորքում ամառանոց, որի սանդուխտները իջնում են պարտիզում: Աջ կողմից գուռ, նոյնպէս ձախ կողմից:

§ Ե Ս. I

Չ Ա Ք.—Ո՛վ է նա, նա, ինչ մարդ է, (Արտղիստիոր կախած կրօն-  
ֆիև) շուտ-շուտ նայելով, որ համարձակում է արատաւորել իշխա-  
նական Բարձր կոչումը ի վերուստ օժեւալ դասակարգ, որ ազատ  
մուտք ունի պալատում: Ո՛վ է նա, մի մեշշանին, մի ողորմելի դա-  
լայի որդի, որ օրէնքի առաջ էլ նւաստացած է. նա ձերդ պայ-  
ծառափայլութեան՝ օրիորդի առաջ ներկայեացրել է, որպէս մի  
ձրիակերի, մի պարապ-սարապ ման եկողի և իհարկէ, օրիօրդն  
էլ ազդելով այդ խօսքերից՝ անկասկած ընկել է թիւրիմացութիւն-  
նեբրի մէջ... Օ՛հ, ես նորա գլուխը կ'փետրէի... (Բռունցֆոյ սեղանիև  
խօսելով):

ԴԱԻԻԹ.—(Յուզւած) Եւ դուք լսեցիք այդ բոլորը:

Չ Ա Ք.—Այո, այո, իմ սեպհական ականջներովս և այնպէս  
բարկութիւնս եկաւ, որ արիւնս քիչ էր մնում գլուխս խփեր:

ԴԱԻԻԹ.—Ինչ յանդգնութիւն:

Չ Ա Ք.—Այտեղ պատի խնդիր է, որ ամեն մի պատւասէր  
մարդ՝ պարտ է պաշտպանել, մանաւանդ ձեզ պիտի ասպետական  
մարդիկ:

ԴԱԻԻԹ.—Ես նորան դժողքի բաժին կ'դարձնեմ:

Չ Ա Ք.—Իշխաւոր ցաւը այն է, որ օրիորդի ներկայութեամբ  
է անում:

ԴԱԻԻԹ.—Ո՛հ, Յուզայի գաւակ:

Չ Ա Ք.—Հէնց այդ կատաղացրեց ինձ:

ԴԱԻԻԹ.—Ողորմելի մեշշանին:

Չ Ա Ք.—Եւ այդպիսի ստոր միջոցներով ուզում է գողանալ  
նորա սիրտը և տէր դառնալ հարիւր հազարներին և վերջը պար-  
ծենայ, որ իշխան Գաիթ Փերուզեանին դուրս քշեց ասպարէզից  
և ինքը յաղթութիւնը տարաւ:

ԴԱԻԻԹ.—(Յուզւած) Նա ինձանից յաղթութիւնը չի կարող  
տանել, նա չունի առաւելութիւններ, որ օր. Գոհարիկը նորան  
վերագասի ինձանից: Ես իշխան եմ, ես ազնւատոհմ եմ և իմ հան-  
գուցեալ հայրս և թէ բոլոր բարեկամներս ասպետներ են և այս  
ամենը պէտք է օր. Գոհարիկը գնհատի, չէ որ նա խելք ունի, և  
գիտէ լաւը վատից գանապանել, այնպէս չէ:

Չ Ա Ք.—Իհարկէ, միայն ձեր ասպետութիւնից է կախած, որ  
Ռուբէն Գեորգեանին ասպարէզից հեռացնել և օրիորդի սրտին տէր  
դառնալ:

ԴԱԻԻԹ.—Նա չի կարող ինձ մրցակից լինել, թող նա լաւ  
իմանայ ո՛ւմ հետ գործ ունի:

Չ Ա Ք.—Անօթ կ'լինէր իշխան, եթէ այդպիսի մի բախտա-  
խնդիր մարդ ձեզ մրցակից ունենար, այստեղ պատի խնդիր է ձե-  
րդ պայծառափայլութիւն:

ԴԱԻԻԹ.—(Բարկացած) Ես նորան կտոր-կտոր կանեմ սրովս,  
նա ո՛վ է, որ համարձակում է իշխան Փերուզեանիցի տան պատիւը  
շոշափի: Երբեք եմ պ. Չարար, որ ես ոչ մի միջոցի առաջ չեմ  
կանգնել, եթէ մինչև անգամ կեանքս վտանգւի:

Չ Ա Ք.—Ես չեմ կասկածում ձեր խելքի ու քաջութեան վրայ:

ԴԱԻԻԹ.—Լաւ, երեք կ'տեսնենք: Առ այժմս ցտեսութիւն,  
կ'տեսնէք դուք ինչ օյին եմ հանելու նորա գլուխը:  
(Գնում է):

Չ Ա Ք.—(Իշխանի ժպիտով գնում է):

§ Ե Ս. II

(Մտնում են իշխան Գաիթը ու Գոհարիկը):

ԴԱԻԻԹ.—Մեր կեանքի նպատակը՝ ընութեան բարիքներից  
օգուելն է սիրեր ու սիրելի, խունկ ծխիր քո իղէալիդ առաջ ու  
որբան սիրես այնքան աւելի սիրելի ու պաշտելի կ'դառնայ:

Գ Ո Հ.—Ինչ կասկած, ցանկալի է, որ եթէ մէկին սիրում էք  
և սիրւէք դուք, բայց եթէ դուք սիրում էք, իսկ նա ձեզ չի սիրում,  
կարող էք ձեզ երջանիկ համարել:

ԴԱԻԻԹ.—Անկասկած, ոչ...

Գ Ո Հ.—Ուրեմն ինչ պիտի անէիք, ուժով չէիք կարող ստի-  
պել, որ նա էլ ձեզ սիրի:

ԴԱԻԻԹ.—Գա վիճելի հարց է, ես չէի կարող տանել, ես կ'պո-  
կէի այն սիրտը նորա միջից, որ ոչ ոքին չ'պատկաներ. երբեք եմ,  
եթէ մէկը ուզենար փակել իմ առաջս, ես կ'փշրէի ամեն ար-  
գելք ու կ'հասնեմ իմ իղէալիս: Ես սպասում եմ քո վճռին այն-  
պէս՝ ինչպէս եթէ կախաղանի դատապարտւած լինէի:

Գ Ո Հ.—Իշխան, դուք ուզում էք լսել իմ վճիռս:

ԴԱԻԻԹ.—Այո, ես ուզում եմ լսել:

Գ Ո Հ.—Իշխան, ես չեմ կարող ձեր սրտին թարգման լինել,  
եւ սիրում եմ մէկին և ամբողջ էսութեամբ կապւած եմ նորա հետ,  
իմ բախտս, երջանկութիւնս, նա է և մի ուրիշը՝ չի կարող լինել:

ԴԱԻԻԹ.—Ծանր դատավճիռ, մահանից աւելի ծանր:

Գ Ո Հ.—Իշխան, աշխարհս մեծ է և լայն, գնացէք, փրկորե-  
ցէք և կգտնէք անշուշտ ձեր ուզածը:

ԴԱԻԻԹ.—Ոչ, ինձ մի ասէր, որ ես գնամ մի ուրիշին փնտրեմ, եթէ դուք չէք լինի, ուրիշը չի կարող այս խոցւած սրտումս սեղ բռնիլ, մի սիրտ, որ միայն քեզ է ուզում և քեզ է կարօտում:

Գ Ո Ն.—Ոչ, ես ձեզ ասացի, որ սիրտս կապւած է նորահետ, որից բաժանել կեանքի ու մահու խնդիր է:

ԴԱԻԻԹ.—(Չոխեղով առաջ) Ուզում ես առ այս դաշոյնս սպանիր ինձ, միայն թէ իմս լինես:

Գ Ո Ն.—Վերկացէք, իշխան (խոցորտքեամբ) ազատութիւն միք տալ ձեր կրքերին, նա կարող է կուրացնել ամենախելօքներին անգամ: Այն, ինչ որ անհնարին է, չի կարելի հնարաւոր դարձնել:

ԴԱԻԻԹ.—Անհնարին ոչինչ չկայ կեանքում:  
Գ Ո Ն.—Ոչ, կա ես աւելի շուտով կզրկեմ կեանքից՝ բան նորանից:

ԴԱԻԻԹ.—Սուտ է, ամեն ինչ ունայնութիւն է սեպհականութիւն չկայ այս աշխարհումս:

Գ Ո Ն.—Ոչ, նա ունայնութիւն չէ ինձ համար, մի ժամ, մի րոպէ յաւիտենականութիւն է նորահետ իմ կեանքս:

ԴԱԻԻԹ.—Ես չեմ կարող, դու էլ կ'մեռնես, ես էլ:  
Գ Ո Ն.—Ես չեմ վախում մահից, նա սովորական է:

ԴԱԻԻԹ.—(Չոխեղով բռնեղով) Ես չեմ կարող, սիրում եմ քեզ:  
Գ Ո Ն.—(խիստ) իշխան, դա բռնութիւն է, ամօթ է ձեզ, (Չոխեղով ազատեղով փախչում է):

ԴԱԻԻԹ.—Ուրեքս թռչում օսկէ ազանի, գալիս եմ հետևիցդ:

Տ Ե Ս. II

(Նոյն եւ Ռոբէն):

ԴԱԻԻԹ.—(Նկատեղով) Էհ, սպասիր, պարոն:

ՌՈՒԲԷՆ.—Խնդրեմ, մի փոքր քաղաքաւարի եղէք:

ԴԱԻԻԹ.—Ձեզնից կուզէի քաղաքաւարութիւն սովորել:

ՌՈՒԲԷՆ.—Առանց աւելորդաբանութիւնների, ինչ էք կամենում,

եթէ ոչ...  
ԴԱԻԻԹ.—Եթէ ոչ, Սաքոյի տղայ, ինչ... հա, հա...

ՌՈՒԲԷՆ.—Այո ազնիւ Սաքոյի որդին եմ և ոչ թէ պատառաբայծ իշխանի որդի:

ԴԱԻԻԹ.—Սանձեցէք ձեր լեզուն, մեղանին... եթէ ոչ...

ՌՈՒԲԷՆ.—Եթէ ոչ... (խիստ) ինչ կարող էք անել:

ԴԱԻԻԹ.—Ես ձեր լեզուն կ'սանձեմ: (Գաշոյնը մերկացնելով):

ՌՈՒԲԷՆ.—(Հանելով աստիճանակը) Մի քայլ առաջ և գնդակը

կ'փշոյի ձեր ճակատը:

ԴԱԻԻԹ.—(Հեռ-հեռ խաչելով) Ես ձեզ ցոյց կ'տամ:

ՌՈՒԲԷՆ.—(Ծիծաղելով) Հա, հա, հա... Ձերդ գերազանցութիւն արդէն ցոյց տուիք, հա, հա, հա...

ԴԱԻԻԹ.—Չառ լաւ:

ՌՈՒԲԷՆ.—Հա, հա, հա, (յուրջ) իշխան, գնացէք վախացրէք ձեր տանու կատուններին ու հաւերին և ոչ Ռուբէն Գեորգեանին:

ԴԱԻԻԹ.—Լաւ, կ'տեսնես:

ՌՈՒԲԷՆ.—Հա, հա, հա, վախկոտ նապաստակ:

ԴԱԻԻԹ.—Բաւական է ծիծաղէք, ես ձեզ... (յարձակելով):

(Ռոբէնը բռնեղով նորա կոկորդից շարժում է գեղեկ):

Ես ձեզ (կասողած) շան պէս կսատկացնեմ:

Տ Ե Ս. IV

(Նոյն եւ պարտիզպան)

ՊԱՐՏԻԶՊԱՆ.—(Մտնում է) Աղղաներ, այդ ինչ էք անում, ուզում էք այս տան մէջ արին թափել: (Բաժանելով):

ՌՈՒԲԷՆ.—Թող Գրիգոր:

ՊԱՐՏԻԶՊԱՆ.—Խնդրեմ պ. Ռուբէն՝ թէ օրիորդի խաթր ունէք:

ԴԱԻԻԹ.—Գու տեսար, որ այս աւազակը ուզում էր ինձ սպանել:

ՊԱՐՏԻԶՊԱՆ.—Ես, ոչինչ չեմ տեսել:

ԴԱԻԻԹ.—Սուտ մի խօսիր:

ՊԱՐՏԻԶՊԱՆ.—Աստուած մի արասցէ, հոգի ունիմ տալու:

ՌՈՒԲԷՆ.—Երեւում է, որ նորին գերազանցութիւնը կ'առուզնի մեզադրանքներ է ուզում հնարել, բայց այս քեզ չի յաջողել:

ԴԱԻԻԹ.—(Սպառնալով) Այդ քեզ չի մնալ: (Գնում է)

ՌՈՒԲԷՆ.—Գնա, հեռացիր, քանի դուխդ ուսերիդ վերայ է: Գրիգոր, ես գնում եմ եթէ օրիորդը գայ կ'ասես, որ շուտով գալու եմ, բայց բան չ'ասես, խնդրում եմ:

ՊԱՐՏԻԶՊԱՆ.—Ուղիղ ասեմ, չեմ կարող ծածկել:

ՌՈՒԲԷՆ.—Ես ինքս կ'պատմեմ: (գնում է):

ՊԱՐՏԻԶՊԱՆ.—Լաւ:

Տ Ե Ս. V

(Պարտիզպան, ապա Գոհարիկ)

ՊԱՐՏԻԶՊԱՆ.—Մի աղջկայ համար՝ քիչ էր մնում արիւնահեղութիւն պատահէր, մէկը սիրում է՝ սիրոյ համար է անում, իսկ միւսը

փող չունի, ուզում է աղջկան օժիտի տեղ տանի ու ամուսնանայ փողի հետ... մախլաս, որ չէի հասել արիւն պէտք է թափւէր... մախլաս:

Գ Ո Ն. — (Մտնում է) Գրիգոր, ո՛չ որ հարցնող չեղաւ:

ՊԱՐՏԻՁ. — (Կնկրւարով) Ինչպէս չէ...

Գ Ո Ն. — Յետոյ:

ՊԱՐՏԻՁ. — (Կնկրւարով) Աղջիկ պարոն...

Գ Ո Ն. — Հն, ինչ կա, ինչ ես լեզուդ ծամում, ինչ կայ:

ՊԱՐՏԻՁ. — Աչինչ, պարոն Ռուբէն Գէորգեան:

Գ Ո Ն. — Ինչ, ասա, առանց քաշելու:

ՊԱՐՏԻՁ. — Լեզուս բերանումս չի պտտում:

Գ Ո Ն. — Ինչ է պատահել Գրիգոր, ասա, տեսնեմ:

ՊԱՐՏԻՁ. — Պատահել է պատահելու պէս:

Գ Ո Ն. — Ինչէ պատահել:

ՊԱՐՏԻՁ. — Ինքը պ. Ռուբէնը կ'զայ կ'պատմի, ես դժւարանում եմ:

Գ Ո Ն. — Երբ կծիկի ծայրը բացեցիր պէտք է հետ տաս, ասա տեսնեմ ինչ է պատահել:

ՊԱՐՏԻՁ. — Եթէ մի կէս ժամ առաջ այստեղ լինէիր և տեսնէիր ինչպէս պ. Ռուբէնը և իշխան Դաւիթը իրար քիչ էր մնում սպանէին:

Գ Ո Ն. — (Վախեցած) ինչէս ասում...

ՊԱՐՏԻՁ. — Եթէ ես չ'լինէի, օ՛հ, մեծ արիւնհեղութիւն պէտք է պատահեր:

Գ Ո Ն. — Ախ Աստուած իմ:

ՊԱՐՏԻՁ. — Գ. Ռուբէնը քիչ էր մնում խեղդեր իշխանին, հագի ազատեցի ձեռքից:

Գ Ո Ն. — Ինչ բանի համար:

ՊԱՐՏԻՁ. — 2' գիտեմ:

Գ Ո Ն. — Յետոյ:

ՊԱՐՏԻՁ. — Իշխանը փախաւ, իսկ պ. Ռուբէնը ասաւ, որ շուտով գալու է: (Գնում է)

Գ Ո Ն. — Ինչ է նշանակում այս, արդեօք սա մի դաւադրութիւն չէ Ռուբէնի կեանքի դէմ, ուզում են դաւադրութեամբ հասնել իրանց նպատակներին...

Յ Ե Ս. VI

(Նոյնիք եւ Ռուբէն)

Գ Ո Ն. — (Ռուբէն) Ռուբէն, սա ինչեմ լսում, սա ինչ սոսկալի բան է պատահել:

ՌՈՒԲԷՆ. — Անցել է, մտածել աւելորդ է անգամ դրա մասին:

Գ Ո Ն. — Ինչպէս անցել է, և դու, ոչինչ ես համարում այդ բանը:

ՌՈՒԲԷՆ. — Աչինչ, նա ինձ անպատեհ, ես բաւարարութիւն պահանջեցի, նա սուրբ մերկացրեց իսկ ես ատրճանակս հանեցի, նա փախուտ տաւ, վերջը ձեռքով ոյժերս փորձեցինք, ես նորան շարտեցի ինչպէս մի երեսայ, եթէ չ'խղճայի որպէս երիտասարդի, ես նորան կ'խեղդէի, միայն Գրիգորը ազատեց նորան իմ ձեռքից:

Գ Ո Ն. — Վտանգաւոր մարդիկ են, ով գիտէ ինչէր են մտածում:

ՌՈՒԲԷՆ. — Ինչ վտանգ կարող են ինձ սպանալ, այն սուրբ որ կախած ունի նա զարթի համար է և ոչ անձնապաշտպանութեան ու պատւի համար:

Գ Ո Ն. — Ախ, ինձ վրդովեցնում է այս ամենը:

ՌՈՒԲԷՆ. — Միայն խնդրում եմ մի վրդով իր:

Գ Ո Ն. — Ինչպէս չ'վրդովել, երբ հարազատ մայրս՝ ինձ իմ փողովս ուզում է ծախել, նա դաւադրում է ինձ: նա ինձ ուզում է կործանել: նա ուզում է իր սնափարութեան ինձ զոհ բերել:

ՌՈՒԲԷՆ. — Այ, Գոհարիկ, ես կարծում եմ այստեղ մեղաւորը մայրդ չէ, այլ հօրեղբայրդ:

Գ Ո Ն. — Ո՛հ, ես ատում եմ այդ նզոված ոստիկանին, ես աչքով աչք չունեմ նրան տեսնելու, նա պատրաստ է արիւնս խմելու: Չնորհիւ իշխան Սաֆիրեանցի միջամտութեան նա, այն բթամիտ ոստիկանապետը արժանացել է Վլադիմիրի: Իհարկէ, շնորհակալութեան տեղ ուզում է մի թանկագին ընծայ նւէր բերել և այդ ընծան ես պետք է լինիմ:

ՌՈՒԲԷՆ. — Ողորմիկի արարած, արքայի ստրուկներ, ինչու համար են այդպիսի մարդիկ ապրում:

Գ Ո Ն. — 2' գիտեմ ինչ են ուզում ինձանից, բաւական չէ ինչքան արիւնս պղտորեցին, այժմս էլ դաւադրութիւն են սարքում:

ՌՈՒԲԷՆ. — Մի վրդովիր ազաչում եմ, ես չեմ վախում զրանց դաւադրութիւնից:

Գ Ո Ն. — Ախ, Աստուած իմ:

ՌՈՒԲԷՆ. — Ասա, խնդրում եմ ինչ սրտով ես կարող եմ գնալ

սովորել, երբ դու անպաշտպան ամեն կողմից պիտի ենթարկուես նրանց հալածանքի:

Գ Ո Ղ.—(Սքախուեքով) Ոչ, գնան, գեռ իմ մէջս այնքան ոյժ եմ զգում, որ նրանք չեն կարող իմ հոգիս ընկճել: Դու վաղանից պատրաստութիւն տես ճանապարհ ընկնելու: Ահա, այս 2000 ր. չէկը, գուցէ ես մեռնեմ, միայն թէ դու չզրկուես քո ուսումից:

ՌՌԻՖԷՆ.—Դու ինձ երկիւղ ես ներշնչում քո նախազգացում- ներով: Ոչ, ես չեմ հեռանալ քեզանից, ես քեզ չեմ թողնիլ այդ ծանր խոհերի մէջ:

Գ Ո Ղ.—Մի վախիր, ես ամեն տխրութիւն կ'իսեղդեմ իմ մէջս ու երջանիկ օրերի գաղափարով պիտի տրամադրեմ ինձ: Մենք կ'տեսնուենք ամենայն օր ու կ'խօսենք իրար հետ մեր նա- մակներով:

ՌՌԻՖԷՆ.—Միայն այդ սփոփանքն է մնում ինձ:

Գ Ո Ղ.—Վաղը ժամի 11-ին կլինեմ փառաց տաճարի առաջ:

ՌՌԻՖԷՆ.—Ուրեմն մինչև վաղը: (Համարտելով ձեռքը) ցտեսու- թիւն:

Տ Ե Ս. VII

(Եղիաբէք եւ Զաֆար խօսարով մտնում են)

Ձ Ա Ք.—Լաւ է, որ անարին է վերջացել այդ դէպքը, օհ, եթէ մի սպանութիւն պատահէր՝ ինչ կլինէր մեր դրութիւնը:

Ե Ղ Ի.—Ես քեզ ասում եմ, որ իր հօր աւագակ որդին է:

Ձ Ա Ք.—Ապա, ես էլ այդ եմ լաց լինում, միթէ կարելի է այդ պիտի աւագակների հետ գործ ունենալ: Տեսնում ես նրա յանդգ- նութեան, ուրիշի տունը ուզում է արինով շաղաղել: Դրան հար- կաւոր է դատի ենթարկել ու Սիբիրի խորքերը բռնել որ նորա ոսկոր- ները այնտեղ փրթեն:

Ե Ղ Ի.—Գոնէ շուտով գնան, կորչի այստեղից, ախ, նորա ոտը կոտրուեր, որ այս շէմքից տուն ներս չ'գնէր:

Ձ Ա Ք.—Տայ Ասուած. իմացիր երբ է կորչում, ես վաղը գալու եմ: Սիրող լաւ պահիր: (Գնում է):

Ե Ղ Ի.—Այս դրութեան մէջ կարող եմ սիրտս հանգիստ պա- հել:

Տ Ե Ս. VIII

(Եղիաբէք եւ Գոհարիկ)

Ե Ղ Ի.— Իմացար ինչ սոսկալի դէպք է պատահել մեր տանը,

անա, քո ընտրածդ: (Բարկացած)

Գ Ո Ղ.—Իմ ընտրածս յանցանք չունի, այլ քո ընտրածը:

Ե Ղ Ի.—Սուտ ես խօսում, աւագակ Սաքօյի տղան է յան- ցաւոր:

Գ Ո Ղ.—Ոչ, նորին պայծառափայլութիւնը է գոռոզացած իր տիտղոսով արհամարում է պ. Ռուբէն Գէորգեանին, որը պահանջում է բաւարարութիւն, իսկ նա արհամարում է ու մերկացնում է իր սուրբ: Պ. Գէորգեանը տեսնելով վտանգը, հանում է իր ատրճա- նակը, սրից վախեցած նորին պայծառափայլութիւնը փախուստ է տալիս նապաստակի պէս, ահա, ճշմարտութիւնը: Եթէ չես հաւա- տում, հարցրու պարտիզպանին:

Ե Ղ Ի.—Խնդրում եմ, բիշ ծիծաղես, ամօթ է վերջապէս՝, նո- րին պայծառափայլութիւն... այո, նա նորին պայծառափայլու- թիւն է իսկ Սաքօյի տղան նորին մեղչանութիւն:

Գ Ո Ղ.—Մենք ես մեղչանիներ ենք:

Ե Ղ Ի.—(Վիրտորում) ինչպէս:

Գ Ո Ղ.—Այո, ինչ ես զարմանում, իհարկէ մեղչանիներ ենք, նորին պայծառափայլութիւն չենք, թէև ուզում ես որ լինենք, որ փողով գնես մեծ իշխանուհի կոչումը:

Ե Ղ Ի.—Չէիր կամենայ, որ իշխանուհի լինէիր հա...

Գ Ո Ղ.—Ես հրաժարում եմ մարդկային այդ կեղծ զարթերից:

Ե Ղ Ի.—Իհարկէ կ'հրաժարես... հը, հը, հը... նրանց մեծ պատարժան անունը ես ուզում կրել: (Բարկացած) Եթէ նա համար- ձակելի է այս շէմքից ոտքը ներս գնելու, կ'հրամայեմ ծառաներին, որ վզակոթից բռնած մինչև դուռը վզակոթին տալով դուրս հա- նեն:

Գ Ո Ղ.—Նա ոչ այստեղ մնում է և ոչ էլ գայ, իսկ եթէ գայ էլ, այն ժամանակ հրամայիր ծառաներին, որ ինձ ևս նոյն ձևով հեռացնեն:

Ե Ղ Ի.—Ուրեմն, պարզ է, ուզում ես նորան գնալ:

Գ Ո Ղ.—Եթէ գնացի, այո, միայն նորան:

Ե Ղ Ի.—Այն ժամանակ նզովի քո ծնունդը, նզովի այն օրը, որ ես քեզ աշխարհ բերի: Սև թագ գնես գլխիդ և չ'արժանա- նաս մայր լինելու: (Հեկեկաշով ընկնում է արողի վրայ) վայ մեռ- նում եմ... ջուր... ջուր...

Գ Ո Ղ.—(Զակոյր ասրով) Զուտ ջուր, (աղախիկե) ջուր ասում եմ քեզ: (Բերում է աղախիկը) մայրիկ, մայրիկ, աղաչում եմ, խմիր փոքր ինչ: (խաղում է):

Ե Ղ Ի.—Հեռու ինձանից, ես քո մայրդ չեմ... (Արսաւերով):  
 Գ Ո Յ.—Մայրիկ... Ա՛խ, Աստուած իմ:  
 Ե Ղ Ի.—Եթէ հասկանում ես, որ ես քո մայրդ եմ, իմ վերջին  
 վճիռս է, կամ ես, կամ Ռուբէն Գէորգեան: Լաւ մտածիր այժմս:  
 (Վերկենարով, աղախակիւ) Նունէ, բռնիր ձեռքիցս: (Գնում են):

§ Ե Ս. IX

(Գոհարիկ մեռակ մնում է շարած)

Գ Ո Յ.—Որքան է աւելի գերազասելի, մօր սէրը, թէ ամուսնու,  
 որը ընդունել և որը մերժել: Սա մայր է, որ բնական օրէնքի  
 միաւորութեան հիման վերայ ինձ գոյութիւն են տուել, սա է այն  
 խորհուրդաւոր գաղտնիքը... նա կերակրել է ինձ, նա խնամել է  
 ինձ և այդ իր սրբազան պարտքն էր. նա ինձ մեծացրել է և հաս-  
 ցրել որոշ գիտակցութեան, այժմս գիտակցելով կեանքը, ես ինքս  
 եմ որոշում ու անօրինում իմ կեանքիս ուղին ու նոր կեանք ստեղ-  
 ծում՝ անկախ իմ ծնողներէ: Ես եմ իմ սրտիս և զգացմունքներս  
 տէրը, ես եմ ընտրում իմ կեանքիս լծակիցը՝ նոր ընտանիք կազ-  
 մելու: Այստեղ նսեմանում է մօր սէրը և ուժեղանում է ամուսնու  
 սէրը, ոչ ոք չի կարող արդեւ լինել և չի կարող բրորդ անձնաւորու-  
 թիւնը մտնել: (Տխուր նսում է):

§ Ե Ս. X

(Նոյնի եւ Արասեակ)

Ա Ր Ո Ւ Ս.—(Մօտենարով) Գոհարի՛կ...  
 Գ Ո Յ.—(Սրախուերով, ուրախ) Արուսեակ, որքան ուրախ եմ,  
 կեանքի ծանր րօպէին ընկերն է սփոփանք միայն: Արի գրկեմ քեզ:  
 Ա Ր Ո Ւ Ս.—Ինչ է պատահել:  
 Գ Ո Յ.—Ձէ որ իմ կեանքիս ծանր րօպէներում դու ես եղել  
 իմ խորհուրդակիցս:  
 Ա Ր Ո Ւ Ս.—Անկեղծօրէն սիրելով քեզ, ես ոչինչ չեմ ծածկել  
 քեզանից և նոյնպէս դու ինձանից:  
 Գ Ո Յ.—Եւ միշտ էլ մենք կ'մնանք անկեղծ ընկերներ:  
 Ա Ր Ո Ւ Ս.—Քայց չ'առացիր՝ ինչ է քո ախարութեան պատ-  
 ճառը: Իմացայ, որ Ռուբէնը վաղը գնում է:  
 Գ Ո Յ.—Այո, գնում է:  
 Ա Ր Ո Ւ Ս.—Իսկ մայրդ ինչ է ասում:  
 Գ Ո Յ.—Մայրս այնպիսի նզովք կարգաց, որ ականջներդ

կ'փակէիր. և ուլտիմատում դրեց. կամ ես՝ կամ Ռուբէնը:

Ա Ր Ո Ւ Ս.—Դա արդէն քո կամքի բռնարարութիւն է, դա  
 պատիւ չէ մօրդ համար, նա պէտք է իմանայ, որ մի տղէտի հետ  
 գործ չունի, որ քո պատուարժանութիւնը ոտքի տակ է տալիս:

Գ Ո Յ.—Մայրս այդ չի ուզում հասկանալ, նա պահանջում է  
 որ նրա կամքը կատարել, հաւատացնում եմ քեզ մայրս ինձ խելա-  
 գարութեան կ'հասցնի:

Ա Ր Ո Ւ Ս.—Քաջութիւն ունեցիր սիրելիս, մարառելու տղի-  
 տութեան դէմ: Իրաւ է տղիտութիւնն է համառում բայց վերջ  
 ընկնում է և մայրդ պիտի խոնարհի քո արդար պահանջները  
 առաջ: Եւ միթէ չ'գիտէ մայրդ, որ իշխան Դաւիթը ոչ այլ ինչ է՝  
 եթէ ոչ մի շրջմուլիկ, մի ձրիակեր և մայրդ...

Գ Ո Յ.—Մայրս, այո, մայրս նրանց վերաբերմամբ կոյր է իրան  
 ձեւացնում և այդպիսով ինձ համար զժբախտութեան դուռն է բա-  
 ցում: (Նոյնաբերք երեւում է ու ծածկում):

Ա Ր Ո Ւ Ս.—Չգուշացիր և կամքիդ տէրը եղիր, յիշում ես իմ  
 գլխիս եկած զժբախտութիւնները, եթէ իմ մէջս այդքան բարոյա-  
 կան ոյժ չ'իկնէր, ես այսօր կողոպտած կըլինէի թէ իմ օժիտից և  
 թէ իմ պատից, ուստի, զգուշացիր, նրանք քաղցած գայլեր են,  
 քեզ պատառ-պատառ կանին և դատարկ կ'նստացնեն ձեր կար-  
 ղութիւնից:

XI

(Նոյնի եւ Նոյնաբերք)

Ե Ղ Ի.—(Ներս գարով անբաւական) Չնորհակալ եմ օրիորդ  
 Արուսեակ ձեզանից, լաւ խրատներ էք տալիս ձեր սիրած ընկե-  
 րուհուն, լաւ ընկերուհի էք, կեցցէք... հը՛, հը՛...

Ա Ր Ո Ւ Ս.—Գուցէ ձեզ հաճելի չէ, որ ձեր սրտից չեմ խօսում,  
 քայց որ ասածս ճշմարտութիւն է, ես կարող եմ պնդել ասածս:

Ե Ղ Ի.—Անկեղծ, որ հաճելի չէ, բանի որ դուք ձեր օտա-  
 րտախ մտքերով ու խորհուրդներով մոլորեցնում էք և լարում իմ  
 զէմ, թոյն էք խառնում նորա հոգեկան ապրումների մէջ, խորսա-  
 կում էք նորա բախտը և դուք անկեղծ ընկերուհի էք անւանում հա՛:

Ա Ր Ո Ւ Ս.—Ներեցէք տիկին...

Ե Ղ Ի.—Խնդրեմ, ձեր գաղափարները ձեզ համար պահեցէք  
 և խորհուրդ եմ տալիս չ'խառնելու ուրիշի կենսական գործերում:

Գ Ո Յ.—Որպէս ընկերուհիս՝ ես կարօտ եմ նորա խորհուրդ-  
 ներին:

Ե Ղ Ի.— Ոչ որ իրաւունք չունի իմ տանս կարքազրութիւններ անելու, ուստի, եթէ պնդէք ձեր ասածները, այն ժամանակ խըն- զրեմ թողնէք մեր տունը:

Գ Ո Ն.— Մայրի՛կ...

Ե Ղ Ի.— Այդ քո գործը չ'է:

ԱՐՈՒՍ.— Ես չեմ կարող ծածկելու իմ գայլոյթս, դուք Գոհա- ըրիկի համար մի անգուղ էք բացում ու ուզում էք խորտակել նորա կեանքը:

Ե Ղ Ի.— (Բարկացած) լեզուն ձեզ քաշեցէք և խնդրեմ հեռա-

նաք այստեղից:

ԱՐՈՒՍ.— Ես գնում եմ, բայց իմացէք վերջ ապագայում պէտք է խիստ տուժէք: Ցտեսութիւն սիրելի Գոհարիկ (Հանրաւում է)

Գ Ո Ն.— (Նեղացած) Ինչես կամենում ինձանից մայրիկ, կա- մենում ես իմ դժբախտութիւնս, կամենում ես իմ մահս... ոչ, քանի գլուխս ուսերիս վերայ է ես չեմ ընկնիլ քո իշխանների ձեռքը:

Ե Ղ Ի.— Ես էլ չեմ թոյլ տայ որ ընկնես Սաքոյի ընտանիքը:

Գ Ո Ն.— Այդ իմ գործս է:

Ե Ղ Ի.— Եթէ քո գործն է՝ այն ժամանակ կ'տեսնենք, թող ես Եղիսաբէթս չ'լինեմ, եթէ թոյլ տամ նրանց ոտը այստեղ մտնե- լու, եթէ դու էլ կ'երթաս, գնա՛, նրանց յետևից:

Գ Ո Ն.— Ես չեմ թոյլ տայ քեզ, որ դու կուրօրէն խորտակես իմ կեանքս, ես աւելի կ'գերազանեմ իմ հորս տանիցս զրկելու, քան խայտառակութիւնների մէջ ընկնելու և քանդելու իմ հորս տունը: Մնաս բարև:

Ե Ղ Ի.— Վայ գլխիս: (Խփելով գլխին ընկնում է արտոխն)

Վ Ե Ր Ձ.

Երրորդ արարւածի:

### ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ասիական ճաշակով զարգարւած սենեակ, աջ ու ձախ լուսամուտ- ներ: Աջ ու ձախ դռներ ու միջին դուռ: Բեմի խորքում դուռ գու- նաւոր, ապակիներով, որը բացում է զէպի պարտէզը:

Տ Ե Ս. I

(Եղիսաբէթ եւ Չախար)

Ե Ղ Ի.— Կամաց... մի քանի զիշեր է, որ բուն չի եղել, կար- ծես թէ քնած լինի:

Չ Ա Ք.— Այս բոլոր անց ու դարձը նորա վերայ ազդել է երեի:

Ե Ղ Ի.— Սաստիկ տխուր է, օրերով իր սենեակից չի դուրս գալիս, մինչև անգամ կէս ժամով ուսումնարան գնում է ու իսկոյն յետ դառնում: Որքան աշխատում եմ, որ նրա մասին չ'մտածի բայց և այնպէս՝ ամբողջ օրը նամակազրութեամբ է զբաղւած:

Չ Ա Ք.— Նամակներ շատ ես ձեռք ձգել:

Ե Ղ Ի.— Համարեա 30 նամակ:

Չ Ա Ք.— Որտեղ են այդ նամակները:

Ե Ղ Ի.— Պահած են ապահով տեղ:

Չ Ա Ք.— Հետաքրքիր է ինչեր է գրում 30 նամակներում, որ՝ տեղից է այդքան նիւթ գտնում... Սիրահարներին նիւթ չի պակասում: Բեր, տեսնեմ: (Կարդում է): Լսիր, Եղիսաբէթ: «Ով իմ հոգէհատոր Գոհարիկ! Երկաթուղին, քեզ խլելով իմ աչքի հորիզոնից, կարծես սև ամպերը ծածկեցին արևի շողքերը, մոայլ է սիրտս հրաժեշտի ծանր տպաւորութիւնից ու քո արցունքներդ»... և այլն:

Ե Ղ Ի.— Ուրեմն, գնացել է ճանապարհ ձգելու:

Չ Ա Ք.— (Կարդում է մի ուրիշ նամակ) «Վերջապէս հասայ Բերլին, մի քանի օրից կերթամ Ցիւրիխ, հասնելու պէս նամակ կ'գրեմ: Սա էլ մի ուրիշ նամակ: Ես չեմ հասկանում քո լուսթեան կատճառը, մի գուցէ հիւանդ ես, կամ մի պատճառ կայ քո լու- թեան... » Այս նամակները, Եղիսաբէթ, շատ կարևոր են մեզ: Ամեն մի նամակ վառող նիւթ է սիրող սրտերի, մենք պէտք է հանգցնենք այդ կրակը, իսկ երբ չ'կայ այդ նիւթը՝ սէրը ինքնատիք- եան կ'հանգչի:

Ե Ղ Ի.— Իսկ եթէ բացւեց գաղտնիքը:

Չ Ա Ք.— Մի վախիր, այնպէս խճրճեմ կրծիկի ծայրերը, որ սատանան ինքը գլուխը կորցնի: Ես քեզ ասեմ, որ, ինչքան սէրը

հրգօր է երկու սրտերը իրար հետ կապելու, այնքան էլ հեշտ է այդ կապը քանդելու. բուսական է, որ դաւաճանութեան մի կասկած մտաւ սրտերի մէջ, իսկ կասկածը մի տեսակ ցեց է, որը ուտում է սիրոյ սաղմը, բայց հարկաւոր է մեծ զգշութիւն բանացնել:

Ե Ղ Ի. — Այնպիսի զգուշութիւն, որ ծով ընկած բարի պէս անյայտ մնայ:

Զ Ա Ք. — Այո, այո: Մի քանի նամակներ ես կ'վերցնեմ, իսկ մնացեալները դու պահիր:

Ե Ղ Ի. — Ոչ, բոլորն էլ դու պահիր, ես վախենում եմ, նախ շար սատանին:

Զ Ա Ք. — Հատ լաւ:

Ե Ղ Ի. — Որքան խիստ լինի գաղտնիքը պահած, բայց միշտ էլ սատանան հսկում է, այդ է պատճառը, որ գաղտնիքը չի ծածկում:

Զ Ա Ք. — Խելացի ես դատում: (Գնում է):

Տ Ե Ս. II

(Գոհարիկ մեկնակ)

Գ Ո Հ. — (Նւագում է դաշնամուրի վերայ ու շխտը երգում):  
Եկար Սոֆեան:

Ա Ղ Ա Խ. — Այո, ազդիկ պարոն:

Գ Ո Հ. — Նամակ չ'կայ:

Ա Ղ Ա Խ. — Ոչ, օրիորդ:

Գ Ո Հ. — Ինչ կարող է պատահած լինի, նամակը այսքան ուշանայ: Ինչու չ'անցար ձուշանենց տուն:

Ա Ղ Ա Խ. — Գնացի:

Գ Ո Հ. — Տեսո՞յ:

Ա Ղ Ա Խ. — Նրանց աչքը նոյնպէս նամակի ճանպէն է սպասում:

Գ Ո Հ. — Ձարմանալի բան, ոչինչ չեմ հասկանում: (Մի փոքր յոռոքիւնից յետոյ):

Ա Ղ Ա Խ. — Սուրճ կ'ցանկանք օրիորդ:

Գ Ո Հ. — Երանի քեզ Սոֆեա, հէնց սուրճն է միտս գալիս:

Ա Ղ Ա Խ. — Բա՛, այդպէս կարելի է, որ ոչ ուտում էք և ոչ խմում, չէ՞ որ կարող էք հիւանդանալ:

Գ Ո Հ. — Ես չեմ հասկանում, միթէ այսքան ժամանակ տեղը չ'հասաւ, անկարելի բան է, մի գուցէ՛ հիւանդացի է, մի որեւէ գժբախտ զէպը է պատահել:

Ա Ղ Ա Խ. — Աստուած մի արասցէ:

Գ Ո Հ. — Իսկ եթէ պատահած լինի:

Ա Ղ Ա Խ. — Տխուր բաներ մի մտածէր:

Գ Ո Հ. — Այն ժամանակ կը խելագարեմ ես:

Ա Ղ Ա Խ. — (Մի կողմ) Խեղճ աղջիկ:

Գ Ո Հ. — Սոֆեա, գնա՛, օր. Արուսեակին իմ կողմից կ'խնդրես, որ անպատճառ գայ:

Ա Ղ Ա Խ. — Այս բոպէիս: (Գնում է):

Տ Ե Ս. III

(Եղիաարէք մեկնում է)

Ե Ղ Ի. — Սոֆի, ուր ես շտապում այդպէս:

Ա Ղ Ա Խ. — Գնում եմ օր. Արուսեակին կանչելու:

Ե Ղ Ի. — Օրիորդը՝ սուրճ խմեց:

Ա Ղ Ա Խ. — Չուզեց խմել:

Ե Ղ Ի. — Ինչո՞ւ:

Ա Ղ Ա Խ. — Առաւօտեան՝ ոչ թէյ է խմել և ոչ մի փշրունք հաց կերել:

Ե Ղ Ի. — Գնա՛, .. Սոֆիկ, լսիր, Գրիգորին կասես, որ գայ, կամ թէ տուր այս հրաւիրատուները բաժանի:

Ա Ղ Ա Խ. — Հրաւէրը ունէք: (Գնում է)

Ե Ղ Ի. — Այո, այո:

Տ Ե Ս. IV

(Նոյնիք եւ Արուսեակ)

ԱՐՈՒՍ. — (Գանգ առնելով) Գոհարիկ, ինչ է պատահել քեզ հետ, դու լաց ես լինում:

Գ Ո Հ. — Արուսեանկ... եկար:

ԱՐՈՒՍ. — Միայն քո սիրոյ համար:

Գ Ո Հ. — Որքան ուրախ եմ:

ԱՐՈՒՍ. — Եթէ ոչ, այն անպատուութիւնից յետոյ, ես երբէք այս տան շէմքից ոտս ներս չէի դնիլ:

Գ Ո Հ. — Իրաւունք ունես, եթէ ես՝ նորա որդին՝ զգուցի եմ իմ հայրական տանից, ուր մնաց, դու, օտար ես նորա համար:

ԱՐՈՒՍ. — Մայրդ կուրօրէն ընկել է փառասիրութեան ցանցի մէջ, ինքը բաւական չէ, ուզում է քեզ ևս խճճել այդ ոստաների մէջ: Նա կոպտարար վանում է նրանց, ովքեր հակառակ են նորա կարծիքներին:

Գ Ո Հ. — Նա պարզապէս ինձ զոհ է ուզում բերել իրան փա-

աասիրութեան:

Ա Ր Ո Ւ Ս.—Նա չի կարող քեզ ստտիկաններով տանել եկեղեցի ու պսակել:

Գ Ո Ղ.—Այդ էր մնացել:

Ա Ր Ո Ւ Ս.—Գու հաստատ կացիր քո իրաւունքներդ, իսկ ամեն նորա համառութիւնները կփշովի լոկ երազների պէս. դու ինձ այն ասայ, Ռուբէնից ինչ համբաւ ունես:

Գ Ո Ղ.—Ոչ մի համբաւ:

Ա Ր Ո Ւ Ս.—Միթէ:

Գ Ո Ղ.—Այո: Ոչ մի նամակ:

ԱՐՈՒՍ.—Ինչ ես խօսում:

Գ Ո Ղ.—Անկեղծ եմ ասում:

ԱՐՈՒՍ.—Այ քեզ զարմանալի բան: Ուրեմն ոչ մի նամակ:

Գ Ո Ղ.—Ճանապարհից միայն երկու նամակ եմ ստացել, այդ է:

ԱՐՈՒՍ.—Սրղէն երեք ամիս է կարծեմ:

Գ Ո Ղ.—Չորրորդ ամիսն է արդէն:

ԱՐՈՒՍ.—Ինչ կարող է պատահած լինել:

Գ Ո Ղ.—Չգիտեմ, եթէ չխելագարւեմ լաւ կ'լինի:

ԱՐՈՒՍ.—Գուցէ չի հասնում քեզ նորա նամակները:

Գ Ո Ղ.—Ուր պիտի կորչին:

ԱՐՈՒՍ.—Մի գուցէ հիւանդացել է ճանապարհն ու մի որեւէ քաղաքում մնացել:

Գ Ո Ղ.—Ինչ իմանամ և ոնց իմանամ:

ԱՐՈՒՍ.—Չանգի ձայն է:

Գ Ո Ղ.—Միթէ:

ԱՐՈՒՍ.—Ես կերթամ կրացեմ: (Ետ դառնալով) հեռագիր է:

Գ Ո Ղ.—(Ուրախ) Երեկ պատասխան է իմ հեռագրիս: (Բացում է) Ռուբէն Գէորգեանը բացակայում է համալսարանից: Միւլլեր:

ԱՐՈՒՍ.—Երեկ տեսուչն է գրողը:

Գ Ո Ղ.—Հեռագրերը նորա անունով եմ տւել:

ԱՐՈՒՍ.—Գուցէ գնացել է Միւնխէն:

Գ Ո Ղ.—Ինչ իմանամ (Ուսից կախ ընկնելով) եթէ այնտեղ չէ, ուրեմն գնացել է:

ԱՐՈՒՍ.—Երբ մի հեռագիր տանք այնտեղի համալսարանի քէկտորին:

Գ Ո Ղ.—Այդ էլ փորձենք: Գու հեռագրերը Արուսեակ, ես ոյժ չունեմ որ տանից դուրս գամ:

ԱՐՈՒՍ.—Գու հանգիստ եղիր ու մի շփոթիր քո սիրտը,

Գ Ո Ղ.—Այդ էլ փորձենք: Գու հեռագրերը Արուսեակ, ես ոյժ չունեմ որ տանից դուրս գամ:

ԱՐՈՒՍ.—Գու հանգիստ եղիր ու մի շփոթիր քո սիրտը,

Գ Ո Ղ.—Այդ էլ փորձենք: Գու հեռագրերը Արուսեակ, ես ոյժ չունեմ որ տանից դուրս գամ:

ԱՐՈՒՍ.—Գու հանգիստ եղիր ու մի շփոթիր քո սիրտը,

Գ Ո Ղ.—Այդ էլ փորձենք: Գու հեռագրերը Արուսեակ, ես ոյժ չունեմ որ տանից դուրս գամ:

ԱՐՈՒՍ.—Գու հանգիստ եղիր ու մի շփոթիր քո սիրտը,

Գ Ո Ղ.—Այդ էլ փորձենք: Գու հեռագրերը Արուսեակ, ես ոյժ չունեմ որ տանից դուրս գամ:

ԱՐՈՒՍ.—Գու հանգիստ եղիր ու մի շփոթիր քո սիրտը,

Գ Ո Ղ.—Այդ էլ փորձենք: Գու հեռագրերը Արուսեակ, ես ոյժ չունեմ որ տանից դուրս գամ:

ԱՐՈՒՍ.—Գու հանգիստ եղիր ու մի շփոթիր քո սիրտը,

Գ Ո Ղ.—Այդ էլ փորձենք: Գու հեռագրերը Արուսեակ, ես ոյժ չունեմ որ տանից դուրս գամ:

կ'կատարեմ ամեն ինչ: Ես գնացի:

§ Ե Ս. IV.

Գ Ո Ղ.—Գնայ Արուսեակ, դու ես իմ յոյսըս: Ախ՛ Ռուբէն, Ռուբէն... ինչ պատահեց քեզ հետ: Ուր ես, որ տեսնես տանջանքներս: (Լաց լինելով): Միթէ մոռացել ես ինձ: (Գնում է դէպի յուսամուտը):

§ Ե Ս V.

(Նոյն, Եղիսաբէք եւ Մարեան)

Ե Ղ Ի.—Գոհարիկ:

Գ Ո Ղ.—(Չդարձնելով երեսը) ինչ կայ:

Ե Ղ Ի.—Պարոն Սմբատ բէգ Սարեան: Համեցէք Սմբատ բէգ:

Ս. ԲԻԳ.—(Ներս գալով) Օրփորդ Գոհարիկին ջերմ բարևներս:

Գ Ո Ղ.—Բարև ձեզ:

Ս. ԲԻԳ.—Ինչպէս էք օրփորդ:

Գ Ո Ղ.—Ապրում եմ ժամանակի համեմատ: Վաղուց է ձեզ չեմ տեսել, համեցէք խնդրեմ:

Ս. ԲԻԳ.—Չնորհակալ եմ: Դեռ չէք ապրել, նոր պիտի սկսէք ապրել:

Գ Ո Ղ.—Դեռ չեմ ապրել, բայց կարծում եմ, որ ապրել եմ արդէն:

Ս. ԲԻԳ.—Դեռ շատ կեանք կայ ձեր առաջ, դուք դեռ հաս էք, ինչէք գորա համար մտածում:

Գ Ո Ղ.—Ոչ Սմբատ բէգ, դա անորոշ է, ժամերով ապրում ենք, իսկ օրերը հարցական են դառնում:

Ս. ԲԻԳ.—Հենց այդ անորոշութիւնն է, որ մեզ յուսադրում է և մենք ձգտում ենք ամենամեծ գործերին ձեռնամուխ լինելու:

Գ Ո Ղ.—Է՛հ միևնոյն է, ինչ որ ստեղծվել է պէտք է մեռնի, վաղ թէ ուշ, այդպէս է բնութեան օրէնքը:

Ս. ԲԻԳ.—Օր. Գոհարիկ, դուք յուսահատուած էք խօսում, այդ անհասկանալի է ինձ, այն էլ ձեր հասակում:

Գ Ո Ղ.—Միևնոյն չէ, չբացւած կոկոննէլ է չորանում ու ծաղկած վարդն էլ:

Ս. ԲԻԳ.—Է՛հ թողնենք, այդ տխուր մտածմունքները:

Գ Ո Ղ.—Ասացէք խնդրեմ, որտեղ էիք վերջին ժամանակները:

Ս. ԲԻԳ.—Մի առժամանակ Փարիզում, իսկ վերջերս Բերլինում:

Գ Ո Ղ.—Բե՛րլինում:

Ս. ԲէԳ.— Այո՛.

Գ Ո Ն.— Կան մեր հայրենակիցներին:

Ս. ԲէԳ.— Ինչպէս չէ, ի միջի այլոց պատահամա՛ր մի երեկոյ-  
թում պատահեցի մի երիտասարդ ուսանողի հետ, եթէ չեմ սխալ-  
ոււմ, կարծեմ ազգանունը Ռուբէն Գէորգեան էր:

Գ Ո Ն.— Ռուբէն Գէորգեան:

Ս. ԲէԳ.— Եթէ յիշողութիւնըս չի դաւաճանում այդպէս ասաց:

Գ Ո Ն.— Մենակ էր նա:

Ս. ԲէԳ. Ոչ, մի գերմանուհու հետ:

Գ Ո Ն.— Ով էր այդ գերմանուհին:

Ս. ԲէԳ.— Չգիտեմ, միայն այսքանս հասկացայ, կարծեմ պա-  
րոնի նշանածն էր:

Գ Ո Ն.— Նշանածը:

Ս. ԲէԳ.— Այո այդպէս հասկացայ:

Գ Ո Ն.— Չարմանալի բան:

Ս. ԲէԳ.— Պէտք է չ'զարմանալ քանի որ մեր ուսանողները,  
աւելի մեծ պարծանքով ամուսնանում են օտար ազգի, ազախին-  
ների, կար անողների, լուացկանողների հետ քան մեր լաւ ընտանի-  
քի աղջկերանց հետ:

Գ Ո Ն.— Ինչո՞ւ:

Ս. ԲէԳ.— Չէք իմացել ժողովուրդական առածը, թէ հարեանի  
շիլ հարսը, մեր տան գեղեցկուհուց լաւն է:

Գ Ո Ն.— Չատ ցաւալի է:

Ս. ԲէԳ.— Ես չեմ էլ զարմանում, որ նա բացառութիւն կազմի,  
ինչու է նա ձեզ այդքան հետաքրքրում:

Գ Ո Ն.— Ոչինչ այնպէս... բայց հաստատ գիտեք, որ այդ ուսա-  
նողի հարսնացուն է և ինքը ասաց այդ խօսքը:

Ս. ԲէԳ.— Նախ ուրիշ ուսանողներ ասացին, ապա նորա ամ-  
բողջ խօսակցութիւնից այդ հասկացայ, այդքան միայն հասկացայ  
ուղիղ թէ սխալ... չ'գիտեմ:

Գ Ո Ն.— Ներեցէք ես գորա համար չ'ասացի:

Ս. ԲէԳ.— Ներեցէ՛ք (Վերկեճալով) Մի ուրիշ անգամ գուցէ պա-  
տահենք: Չեզ լաւ պահեցէք: Ճտեսութիւն (զնում է):

Գ Ո Ն.— Ճտեսութիւն:

Տ Ե Ս VI.

(Գոհարիկ մեճակ)

Գ Ո Ն.— (Տխուր հագիւ ֆայլով մի փոքր ժառանգակից յետոյ):

Ռուբէնը ամուսնացել է մի Գերմանուհու հետ ինձ փոխել է մի  
նորիշի հետ... սա կատակ է՝ թէ իրականութիւն... (Առատեալով)  
եթէ իրականութիւն լինի, և ես խաբւած լինեմ... ինձ ստորացնել  
ինչո՞ւ միթէ ես պակաս արժանիքներ ունէի քան այն Գերմանու-  
հին... Միթէ ես նորան չեմ սիրել հոգուս ամբողջ կարողութեամբ.  
բայց ինչ պատահեց նորա հետ, միթէ մօրս վարմունքը զզւանք  
յարուցեց իմ դէմ:

Տ Ե Ս VII.

(Նոյն եւ Արուսեակ)

ԱՐՈՒՍ.— (Չսայով) Վերջապէս իմացայ, Ռուբէնը եղել է Միւն-  
խենում իսկ թէ այժմս որտեղ է ահա բեզ հեռագիրը:

Գ Ո Ն.— Այո, գուցէ այս է պատճառը, որ նամակ չի գրում:

ԱՐՈՒՍ.— Երևի:

Գ Ո Ն.— Բայց այսօր մի բօ'թաբէր լուր լսեցի:

ԱՐՈՒՍ.— Ումից:

Գ Ո Ն.— Իմ մօրս ազգականների մէկից Սմբատ բէզ Սարեանից:

ԱՐՈՒՍ.— Այո, գիտեմ: Կինն էլ եթէ չեմ սխալուում օտարուհի է:

Գ Ո Ն.— Այո, այո:

ԱՐՈՒՍ.— Տեսոյ:

Գ Ո Ն.— Ասում է, իբր թէ պատահել է Բերլինում Ռուբէնի  
հետ մի երեկոյթում...

ԱՐՈՒՍ.— Չետաքրքիր է:

Գ Ո Ն.— Ռուբէնը ներկայացրել է իր նշանածին:

ԱՐՈՒՍ.— Ինչ նշանածին:

Գ Ո Ն.— Իր նշանածին, հասկանում ես:

ԱՐՈՒՍ.— Եւ զու հաւատացիր:

Գ Ո Ն.— Սուտ խօսալու ինչ կարիք ունէր, քանի որ նա չըզի-  
տէ մեր հարաբերութիւնը:

ԱՐՈՒՍ.— Ինչ ես խօսում, Գոհարիկ:

Գ Ո Ն.— Հաւատացնում եմ:

ԱՐՈՒՍ.— Դու ինչ ես ասում, դեռ տեղը չ'հասած նշանել է,  
դա անհաւատալի է, աչքովս տեսնեմ անգամ չեմ հաւատայ:

Գ Ո Ն.— Ես, ես չեմ ուզում հաւատալ...

ԱՐՈՒՍ.— Ես կերթեմ որ Ռուբէնը ընդունակ չէ այդպիսի  
ստոր դաւաճանութիւն կատարելու, դա ուղղակի մի հեքեաթ է:

Տ Ե Ս VIII.

(Նոյնիք եւ աղախիկն)

Ա Ղ Ա Խ. — Օրիորդ, նամակ (զնումն) (Երկուսով) տեսնենք ումից է:

Գ Ո Յ. — (Ձսապ բացանկրով ուրախ) Ռուբէնից է:

ԱՐՈՒՍ. — (Ուրախ) Իրան:

Գ Ո Յ. — Արուսեակ... (ընկնկեղով աթոռի վրայ):

ԱՐՈՒՍ. — Ինչ պատահեց... Գոհարիկ (ջուր բերում) խափը շուտով, խօսիր, ասայ ինչ կայ այդ նամակում:

Գ Ո Յ. — (Մի վոսր ուշի գայով) կաթղա:

Ա Ր Ո Ւ Ս. — (Կարդալով) Ազնիւ և բարի Գոհարիկ! Մի դատապարտիր՝ եթէ ես դժբախտ հանդամանքների շնորիւ, իմ բախտս կապեցի մի այլ աղչկայ հետ: Ես շատ կուեցի ինձ հետ, որ իմ կամքիս յաղթէի բայց ստիպւած էի այդ քայլը տնելու, որպէս զի օտարների մէջ չկորցնենք մեզ ազգայն պատիր... ինչ կապ ունի սորա հետ ազգային պատիր:

Գ Ո Յ. — Չարունակիր:

Ա Ր Ո Ւ Ս. — (Յուզւած) Չեմ հասկանում... (կարդում է) բայց ինչ արած՝ անհնարին ոչինչ չկայ աշխարհումս... գուցէ նախախնամութիւնը այսպէս էր կարբաղել, որից անհնարին էր փախչել ու մենք անգոր ենք բնութեան անօղոր վճուի դէմ: (Նայում է ծրարի վերայ գրած հասցեիկն): Բայց սա արդարացում չէ, սա յանցանք է, սա ներելի չէ:

Գ Ո Յ. — Այ, ես կ'ներէի այն սրբազան սիրոյ համար...

Ա Ր Ո Ւ Ս. — Ես դատապարտում եմ (կարդում է) Ուստի, հաշտուիր բախտիդ հետ և ներիր ինձ, չէ որ դու բարի ես ու վեհանձն իսկ ես, ես, ... Մնաս խաղաղութեամբ: Քո Ռուբէն:

Գ Ո Յ. — (Արտասելով) Քո Ռուբէն... հա, հա, հա, ինչ է նշանակում այդ, Տէր իմ Ասուած, սա ինչ ծաղր է, սա ինչ ստորացում է:

ԱՐՈՒՍ. — Ով ում կամենում է ստորացնել, նա ինքն է իրան ստորացնում... Բայց ես չեմ հասկանում, այս երազ է թէ ցնորք, չեմ կարողանում, հաւատալ, ոչ աչքերիս և ոչ ախանջներիս... Ռուբէնը՝ զմաւան... ինչ անիծեալ միտք:

Գ Ո Յ. — Այ, ոչ, Արուսեակ, նա չի կարող դաւաճան լինել, մի մարդ, որ ազնիւ է նա դաւաճան լինել չի կարող: Ես զարմանում եմ, որ դու այդպիսի խօսք ես ասում նորա մասին:

ԱՐՈՒՍ. — Չարմանալու ոչինչ չ'կայ լուսնի տակ, երևի Վեսգոտունիք աւելի հրապուրիչ են եղել, որ կարողացել են յափշտակել նորա սիրտը՝ երբ նա քնած է եղել կամ գինովցած և խելքը թմուած գինու ոգելիքով, որ չի հասկացել իր արածը: Ո՛հ, սէրը՝ նշանակում է անբարոյեականութեան պտուղ է, որը կարելի է կեղտոտ շորի պէս փոխել:

Գ Ո Յ. — Միթէ, Ռուբէնից կարելի էր այդ սպասել:

ԱՐՈՒՍ. — Չէի սպասել, եթէ չ'գիտենայի ներկայ երիտասարդութեան բարոյեական հասկացողութիւնները:

Գ Ո Յ. — Բայց, Ռուբէնը այդպէս չէ կրթւած, նրա համար կայ սրբութիւններ, նորա համար սէրը Ասուածութիւն էր... Դու յիշում ես այն սիրոյ երգը, որ այնքան ոգևորութեամբ երգում էր:

Ա Ր Ո Ւ Ս. — Յիշում եմ:

Գ Ո Յ. — (Երգում է դաշնամուրի դաշնակցութեամբ): Գեղեցիկ է այնպէս չէ:

Ա Ր Ո Ւ Ս. — Հէնց այդ է սիրտս ցաւացնում, նա մարդէր-այն էլ կեղծ գիտակի տակ... Էհ, կամազուրկ սերունդ:

Գ Ո Յ. — Արուսեակ, արդեօք նորա ծնողներին յայտնի է այս լուրը:

Ա Ր Ո Ւ Ս. — Ապա, ինչու եմ գլուխս ծեծում:

Գ Ո Յ. — Նշանակում է՝ ճիշտ է, Սմբաթ բէզը չի ստել:

ԱՐՈՒՍ. — Այո, ստոր գործ է կատարել:

Գ Ո Յ. — Աւելի մեծ ստորութիւն, երբ քեզ խարում է քո սիրածը, որին դու սիրում էիր ու նւիրել էիր քո ամբողջ զգացմունքով և երբ մտածում էիր կատարեալ երջանկութեանդ համար, աւանդ նա փշուում է ամբողջ կեանքդ: (Ման է գայիս ու արտասում):

ԱՐՈՒՍ. — Հանգստացիր սիրելիս:

Գ Ո Յ. — Հանգստանամ, իմ հանգստութեան տեղը գերեզմանատունն է:

ԱՐՈՒՍ. — Այ սիրելիս, դու առաջինը չես և ոչ էլ վերջինը այդ դժբախտութեան մէջ:

Գ Ո Յ. — Արուսեակ, միենոյնը չէ, վաղ թէ ուշ պէտք է դադարի գոյութիւնը, որքան շուտ, աւելի լաւ և սորանից յետոյ էլ ինչու համար ապրեմ և ում համար, չէ որ կմախք եմ զարձել, մինչև անգամ որթերի համար կերակուր չեմ կարող լինել:

ԱՐՈՒՍ. — Այ Գոհարիկ, դու պէտք է ապրես և ցոյց տաս, որ գիտես սիրել և ստել:

Գ Ո Ն.—Ոչ, ես չեմ կարող ասել, քանի որ սիրում եմ, իսկ ապրել նշ, քանի որ ես անմեղ եմ, մարուք և անարա, պէտք է թողնել այս մեղքերով բորանամ աշխարհը: Ես սիրում էի կեանքը ինչպէս ժամանակաւոր հիւր փառաւոր հանդիսում, զորանից էլ հիասթափուցայ: Էլ ինչ մնաց ինձ, բացի ունեցածից, որը պէտք է ժառանգութիւն լինի հայ մանուկներին կրթութեան գործին, որին նւիրած եմ ամբողջ հոգովս... Ախ սիրտս...

ԱՐՈՒՍ.—Ի՞նչ պագահեց (ջուր է քերում) Խմիր...

Գ Ո Ն.—Տար ննջարանս: (Գնում է):

Տ Ե Ս. IX.

(Արուսեակ եւ Եղիաւարէք)

Ե Ղ Ի.—Ես թէև անտեղի և շփոթուած ժամանակն քեզ նեղացրի, բայց յոյս ունեմ, որ ներողամիտ կ'լինես:

ԱՐՈՒՍ.—Մարդս պէտք է վեհանձը լինի շարիքի դէմ:

Ե Ղ Ի.—Աւելի մեծ արժանիք չի կարող լինել:

ԱՐՈՒՍ.—Չէ որ ես սիրում եմ Գոհարիկին, չէ որ ընկերուհիս է, նորա սիրոյ համար պատրաստ եմ ամեն ինչ զոհելու:

Ե Ղ Ի.—Գիտեմ, սիրելիս, զորա համար էլ յարգում եմ քեզ: Դուք չ'գիտէք թէ ես որքան եմ մտածում այս դժբախտ դէպքի համար, միթէ չէք կարող ազգել, որ Գոհարիկը հրաժարէք այդ անմիտ քայլից:

ԱՐՈՒՍ.—Ոչ, տիկին, թող թէ ընկերուհիս լինի, բայց չէի ցանկալ այդ լուրջ կենսական հարցում միջամտել:

Ե Ղ Ի.—Վարդ էիք բայց չուզեցիք, թէև դուք էլ համամիտ կ'լինէք, ինձ հետ, որ նրանք մեզ հաւասար մարդիկ չեն:

ԱՐՈՒՍ.—Սէրը հաւասարութիւն չի ճանաչում, նա կոյր է ընտրութեան մէջ:

Ե Ղ Ի.—Բայց վերջը:

ԱՐՈՒՍ.—Ոչ առաջ, և ոչ վերջը, նա զատողութեան մէջ չի մտնում, սիրում է և ամեն ինչ լուր է այդ հարցի առաջ:

(Աղախինը ներս մտնելով)

Ե Ղ Ա Խ.—Օրիորդ կանչող կայ:

Ե Ղ Ի.—Խնդրում եմ, ինչ և իցէ հանգստացրէք նորան, եթէ ոչ վախենում եմ, որ շատ մտածելուց մի բան չ'պատահի:

ԱՐՈՒՍ.—Վաշխատեմ ամեն միջոց գործ դնելու: (Գնում է):

Տ Ե Ս. X.

(Գոհարիկը ներս է մտնում մազերը արձակած)

Գ Ո Ն.—(Այս ու այն կողմը նայելով) Ռուբէն... Ռուբէն... սպասիր... սպասիր... գալիս եմ, Ռուբէն... սպասիր, խնդրում եմ... (չացի մայկով) աղաչում եմ... ես ինչ արի քեզ, չէ որ ես քեզ սիրում եմ, չէ որ դու երդում էիր, որ դու ինձ սիրում ես... Ռուբէն... խղճայ ինձ... սպասիր... գնաց... (Վազում կարծես ուզում է լռելի թայց ընկնում է յասակի վրայ):

Տ Ե Ս. XI.

(Եղիս եւ Եղիաւարէք)

Ե Ղ Ի.—(Ձսապով) Ասումս իմ, ինչ պատահեց: Գոհարիկ, (Ուզում է բարձրացնել) Ով կայ այդտեղ, օգնեցէք: (Մտնում է աղախինը) Զուտ ջուր, Գոհարիկ ջան, ուշքի եկ, խղճա ինձ:

Գ Ո Ն.—(Այս ու այն կողմ նայելով) Նա գնաց...

Ե Ղ Ի.—Վզայ, Գոհարիկ:

Գ Ո Ն.—Վզայ:

Ե Ղ Ի.—Այո, կ'զայ: Բժիշկ, գնա շուտ: (Աղախինը գնում է):

Գ Ո Ն.—Վզայ... ոչ, ոչ... գնաց... գալիս է (ուրախ) Ռուբէն:

Ե Ղ Ի.—Վայ գլխիս, ցնորել է... ինչ պատահեց:

Գ Ո Ն.—Ինձ պատահեց, քիզ ոչինչ: Մրտում եմ...

Ե Ղ Ի.—Գնանք սենեակդ: (Տանում է):

Տ Ե Ս. XII.

(Մի փոքր յուտքիւնից մտնում է և Եղիաւարէք եւ Արուսեակ)

Ե Ղ Ի.—Ինչ ասաց բժիշկը, ես խելքս կորցրել եմ, էլ մի բան չեմ հասկանում:

ԱՐՈՒՍ.—(Տխուր) Պէտք է չ'թողնել մենակ, պէտք է զրազեցրնել, որ նա իր մտքերի հետ չընկնի: Բայց ինչ պագահեց Գոհարիկի հետ:

Ե Ղ Ի.—Էլ մի հարցնիր, բո թշնամիդ չ'տեսնի այն, ինչ որ ես տեսայ:

ԱՐՈՒՍ.—Ինչ է պատահել:

Ե Ղ Ի.—Խելագարի պէս խօսում, կանչում էր նորան...

ԱՐՈՒՍ.—Ռուբէնին:

Ե Ղ Ի.—Այո, փրել էր յատակի վերայ, գունատուել էր, մազերը շաղկկած: Հագիւ թէ վեր բարձրացրինք ու տարանք ներս:

Աստած էր, որ ուղարկեց քեզ ինձ:

ԱՐՈՒՍ.— Ազախինն եկաւ ու կանչեց, ուղիղ ասած նորա պատմածներին եւ չհաւատացի:

Ե Ղ Ի.— Լաւ է ազախինը գլխի է ընկել: Մենակ թողնել անկարելի է ե խնդրում եմ, ի սէր քո Գոհարիկի, մի հեռացիր մօտից:

ԱՐՈՒՍ.— Ես պատրաստ եմ հողիս անգամ չեմ խնայիլ Գոհարիկին:

Ե Ղ Ի.— Ձեր արած լաւութիւնը... թէն ես սե երես եմ ձեր առաջ... բայց...

ԱՐՈՒՍ.— Դա իմ ընկերական պարտականութիւնս է:

Ե Ղ Ի.— Չատ շնորհակալ եմ: Ես գնում եմ մի փոքր գործունեւ:

ԱՐՈՒՍ.— Խնդրեմ, ես այստեղ եմ:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր.

Բեմը ներկայացնում է սինազարդ դահլիճ: Բեմի խորքում գոյնըզգոյն ապակիներից լուսամուտաներ, նրբանցք՝ աջ և ձախ տանող դէպի սենեակներ: Լուում է ներսից սազանդարի նւագելը:

Տ Ե Ս Ի.

(Կանայք եւ տղամարդիկ անդադար անցնում ու դառնում)

1 ԿԻՆ.— (Իշխան Դաւիթին) Իշխանն բարե ձեզ:

ԴԱՒԻԹ.— Յարգանքներս: (Ձեռքը հարկաւորելով):

1 ԿԻՆ.— Երևի չուզեցիր նկատել:

ԴԱՒԻԹ.— Ներեցէք:

1 ԿԻՆ.— Մոռանում էք մեզ:

ԴԱՒԻԹ.— զուր անփոփոխ հիւր էք իմ սրտումս:

1 ԿԻՆ.— Պէտք է չմոռանալ հին ծանօթներին նոյնպէս:

1 ՊԱՐՈՆ.— Տիկին չքանոյշը հրաշալի ուզունդարա է պարում:

ԴԱՒԻԹ.— Կեցցէ տիկին չքանոյշ, հրաշալի էք պարում:

ՀՐԱՆՈՅՉ.— Չնորհակալ եմ ձեր կոմպլիմենտների համար:

ԴԱՒԻԹ.— Տիկ. զուր երեկոյթի զարդնէք:

2 ՊԱՐՈՆ.— Տեսէք օր. Մարաշեանն է: Կատարեալ սիրամարդի պէս է ճեմում:

1 ԿԻՆ.— Իշխան, ձեր հերոսուհին է...

ԴԱՒԻԹ.— Ոչ երբէք: Բայց նա հրաշալի է պարում:

1 ԿԻՆ.— Ձգոյշ կացէք իշխան:

ԴԱՒԻԹ.— Իմ խօսքերս անկեղծ են:

1 ԿԻՆ.— Էյի տեղ է մնացել ձեր սրտում:

ԴԱՒԻԹ.— Միայն մէկի համար է իմ սիրտս:

1 ԿԻՆ.— Որք ձեզ չի սիրում:

ԴԱՒԻԹ.— Մէք:

1 ԿԻՆ.— Ոչ փող:

ԴԱՒԻԹ.— (Ծիծաղելով) Հա, հա, հա...

Հ Ի Լ Ե Ե Բ.— Կեցցէ իշխան Դաւիթ: (Դաւիթը պարում է Հրանուշի հետ):

(Սպասաւորը սկիսեցի վերայ քերում է շանկսնեա գիւնի ու առաջարկում է հիւրերին):

Հ Ի Լ Ե Ե Բ.— Կեցցէ տիկին եղիսարէթ: Ձեր կենացը:

Ե Ղ Ի.— Չնորհակալ եմ: (Ցածր ձայնով)

Մանուս եւ կոտոր կրակ գցած օր. Գոհարիկ եւ Արուսեակ):

Հ Ի Լ Ե Ե Բ.— Կեցցէ օր. Գոհարիկ, ձեր կենացը:

ԴԱՒԻԹ.— Ձեր անգին կենացը:

Գ Ո Հ.— Չնորհակալ եմ:

ԱՐՈՒՍ.— Մոռացիր տխրութիւնդ երբ ամենքը ուրախանում են:

Գ Ո Հ.— Ուրախանալ, ինչպէս սզաւորը հարսանեաց հանդիսում:

ԱՐՈՒՍ.— Դու ոչ առաջին ես և ոչ վերջինը:

Գ Ո Հ.— Տես, իշխանը ինչպէս ուրական հետում է ինձ:

ԱՐՈՒՍ.— Ուզում է Ձարլ Հարոլդ երեալ:

Գ Ո Հ.— Դժուար է նրա սիրտը կարգալը: Սիրտս կարծես թերհաւատանում է:

ԱՐՈՒՍ.— Բայց աշխատիր դսպել նորան:

Գ Ո Հ.— Կուզէի մոռանալ, ձգել ծովի անդունդը իմ ամբողջ յիշողութիւններս: Կուզէի նորից ծնել, որպէս զի նա չպատահեր իմ ճանապարհին: Ախ, Արուսեակ թող միանգամ նորան տեսնէ՛ կտայի իմ կեանքս, երզում եմ քեզ: Բայց, երեկայիբ, որ ես զեռ դարձեալ չեմ հաւատում, որ դաւաճանել է ինձ:

ԱՐՈՒՍ.— Ես նոյնպէս:

Գ Ո Հ.— (Ուրախ) Դու էլ, այնպէս չէ:

ԴԱՒԻԹ.— Օր. Լուսիկ:

ԼՈՒՍԻԿ.— Հեռացէք:

ԴԱՒԻԹ.— Մի բարկացէք:

ԼՈՒՍԻԿ.— Հեռացէք ասում եմ ձեզ, եթէ չեք ուզում ապտակ ստանալ ինձանից: Անամօթ, խարերայ: (Հեռանում է):

ԳԱԻԻԹ.—Որ մեղքիս համար: (Մօտենայով Գոհարիկին): Թոյլ  
տւէր օր. Գոհարիկ, համբուրելու այս ձեռքը, որ սպեղանի կարող է  
լինել տանջւած սրտիս:

Գ Ո Ն.—(Չկատենայով) Սպեղանի, ոչ, ես այլևս հարկաւոր  
չեմ ոչ որին:

ԳԱԻԻԹ.—Ոհ, իմ սրտիս էք հարկաւոր:

Գ Ո Ն.—Ոչ իշխան, ես կենդանի դիակ եմ, Ձեզ պէտք չեմ  
գալ:

ԳԱԻԻԹ.—Թող ամբողջ արիւնս սրսկէին Ձեր երակներն մէջ,  
որ զուր նոր ոյժեր ստանայիր:

Գ Ո Ն.—Գիտեմ մեծանօգի էք և իշխանական ասպետութիւն  
ունէք:

ԳԱԻԻԹ.—Երբուում եմ Ձեզ օր. Գոհարիկ:

Գ Ո Ն.—(Վաւ գգայով նշում է) Մի փոքր ջուր:

ԳԱԻԻԹ.—(Ջուր է սայիս:) խօսէք, խօսէք խնդրում եմ:

ԱՐՈՒՍ.—(Մօտենայով) Գոհարիկ, ինչպէս ես զգում քեզ:

Գ Ո Ն.—Վատ եմ: Իշխան՝ գնացէք, ուրախացէք, գուցէ մենք  
էլի տեսնենք:

ԳԱԻԻԹ.—Որքան ուրախ եմ: (Համբուրելով մեղքը)

(Գոհարիկ ու Արուսեակ զնում են):

ՍԱՓԻ.—Ուրախ ես երևում:

ԳԱԻԻԹ.—Ոհ, մօրեղբայրս... նա ինձ յույս ներշնչեց: նա իմս  
պէտք է լինի:

ՍԱՓԻ.—Ուրախ եմ:

ԳԱԻԻԹ.—Այո սիրելի մօրեղբայր, պէտք է որ մենք մեր նպա-  
տակին հասնենք:

ՍԱՓԻ.—Տա Աստուած:

ԳԱԻԻԹ.—Հիւրերը ցրում են:

ՍԱՓԻ.—Արագազը երրորդ բերան կանչեց:

I ՀԻԼԸ.—Սրբունի, զու շատ տանել տւիր:

II ՀԻԼԸ.—Ինչպէս միշտ, սովորական ձեով:

I ՀԻԼԸ.—Այս գիշեր Հրանուշի բախտն էր բացւել:

II ՀԻԼԸ.—Նա միշտ էլ տանում է:

ՀՐԱՆՈՅՑ.—Ընդամենը 70 րուբլի եմ տարի:

I ՀԻԼԸ.—Ինչ, քիչ է տարի: (Գնում են):

Տ Ե Ս II

(Բնոր մտում է մի փոքր դատարկ) Լսում է զանգի ձայնը):

Ա Ղ Ա Խ.—(Գուռը բացում է) Ով է:

ՌՈՒԲԷՆ.—Օր. Գոհարիկին կարելի է տեսնել:

Ա Ղ Ա Խ.—Ո՞վ էք զուր:

ՌՈՒԲԷՆ.—Ասէք Ռուբէն Գէորգեանն է:

Ա Ղ Ա Խ.—Պարոն, նա հիւանդ է, ոչ որին չեն ընդունում:

ՌՈՒԲԷՆ.—(Ճակատին խփելով) Ինչ ես ասում:

Ա Ղ Ա Խ.—Այո, նա հիւանդ է:

ԱՐՈՒՍ.—Ով է:

Ա Ղ Ա Խ.—Չգիտեմ պարոն Ռուբէն Գէորգեան:

ԱՐՈՒՍ.—Գ. Ռուբէն Գէորգեան:

Ա Ղ Ա Խ.—Այդպէս ասաց:

ԱՐՈՒՍ.—Ներս հրաւիրիր:

Ա Ղ Ա Խ.—(Գուռը բանայով) Համեցէք պարոն:

ՌՈՒԲԷՆ.—(Ներս գայով) Արուսեակ:

ԱՐՈՒՍ.—Սպասի՛ր, հանգստացիր:

ՌՈՒԲԷՆ.—Ու՛ր է Գոհարիկս:

ԱՐՈՒՍ.—Խօսք ունեմ հարցնելու, սպասիր:

ՌՈՒԲԷՆ.—Խօսքի ժամանակ չէ... աղաչում եմ:

ԱՐՈՒՍ.—Տղամարդ եղիր, սպասիր, Գոհարիկը հիւանդ է:

ՌՈՒԲԷՆ.—Գոհարիկը հիւանդ, ինչ եմ լսում:

ԱՐՈՒՍ.—Եւ զու ես պատճառը:

ՌՈՒԲԷՆ.—Ես եմ պատճառը, ինչ ծանր մեղադրանք:

Գ Ո Ն.—(Ներս գայով) Ով է Արուսեակ:

ՌՈՒԲԷՆ.—Ես եմ, Գոհարիկ... (Գրկելով ու արձատելով):

Գ Ո Ն.—Ռուբէն, Ռուբէն... Արուսեակ ջուր:

ՌՈՒԲԷՆ.—Ջուր, ջուր: (Տայիս են ջուր) Խօսիր, ասա՛, լսում եմ:

Գ Ո Ն.—Գու, Ռուբէն իմ մօտս ես:

ՌՈՒԲԷՆ.—Ես յախտեանս քո մօտ պէտք է լինեմ:

Գ Ո Ն.—Ինչու եկար:

ՌՈՒԲԷՆ.—Քո սէրդ և լրութիւնդ ստիպեց ինձ գալու:

Գ Ո Ն.—Իմ սէրս:

ՌՈՒԲԷՆ.—Քո սէրը, որ աշխարհիս ամեն փառքերից բարձր է:

Գ Ո Ն.—Չէ որ իմ սէրս ծախելիս մի ուրիշին:

ՌՈՒԲԷՆ.—Ոչ որ չէր տալ այդ գինը, դու ես որ կաս, չ'կայ

մի ուրիշը, բայց ո՞վ ասաց այդ դաւադիր միտքը:

Գ Ո Ն.—Բերլինից եկող ճանապարհորդը:

ՌՈՒԲԷՆ.—Սմբատ բէգը:

Գ Ո Ն.—Այո, նա ինքը:

ՌՈՒԲԷՆ.—Ուր է այդ անագնիւ մարդը, ես նորան նամակ եմ

տել, որ անձամբ տայ թեզ և տեղեկութիւն տայ քո մասին:

**Գ Ո Ն.**— Ինչու, իմ նամակներս չէիր ստանում:

**ՌՈՒԲԷՆ.**— Բացի մէկից, ուրիշ ոչ մէկը:

**Գ Ո Ն.**— Ինչպէս:

**ՌՈՒԲԷՆ.**— Երգում եմ, ոչ մի նամակ:

**Գ Ո Ն.**— Արուսեակ:

**ԱՐՈՒՍ.**— Այստեղ մի դաւադրութիւն կայ սարքած: Իսկ հեռագիր:

**ՌՈՒԲԷՆ.**— Ստացել եմ, պատասխան էլ հեռագրել եմ:

**Գ Ո Ն.**— Ստացել ենք Արուսեակ:

**ԱՐՈՒՍ.**— Այո:

**ՌՈՒԲԷՆ.**— Իսկ իմ գրած նամակները: (Երեւում եմ Չափար ու Եղիաարեք ու ծածկում):

**Գ Ո Ն.**— Միայն երկու նամակ, մէկը ճանապարհից իսկ միւսը քո բօթարեռ նամակը:

**ՌՈՒԲԷՆ.**— Միայն այդ:

**Գ Ո Ն.**— Այո:

**ՌՈՒԲԷՆ.**— Ինչես խօսում Գոհարիկ, երգում եմ, որ օր չէր լինում որ նամակ չ'գրէի:

**Գ Ո Ն.**— Չեմ ստացել:

**ԱՐՈՒՍ.**— Օձի գլուխը թաղած է մի տեղում:

**ՌՈՒԲԷՆ.**— Ուրեն այդ նամակները:

**Գ Ո Ն.**— Ահա: (Տալիս է տա):

**ՌՈՒԲԷՆ.**— Այո, ծրարը իմ գրածս է իսկ... (կարդում է) սա, սա, ստոր դաւադրութիւն է, սա խարդախած է, կեղծած է նամակս: (Երեւում եմ Եղիաարեք ու Չափար) Այժմս հասկանում եմ, երգում եմ քո անունով այդ դաւադրներին իմ մատներովս կ'սեղ-գեմ, պատառ—պատառ կանէի ու նրանց գիակը շների առաջ կածէի:

**ԱՐՈՒՍ.**— Սոսկալի ու քսամենելի գործ:

**ՌՈՒԲԷՆ.**— Ես նրանց դատի կ'մատնեմ, հոյնպէս նամակաբերին և նրանց, որոնք խառնեն այդ ստոր գործի մէջ: (Չափար շապով դուրս է գնում):

**ԱՐՈՒՍ.**— Փախաւ իսկարիտացին:

**ՌՈՒԲԷՆ.**— Ուրես փախչում, անամօթ: (Չեմֆից բռնած բերում է) Ասա, շուտ, ո՞վ կեղծեց այս նամակները, ո՞վ է այս տան մէջ դաւադրութիւն սարքողը:

**Ջ Ն Ք.**— Ես... ես... չ'գիտեմ, թող ինձ:

**ՌՈՒԲԷՆ.**— Այ, սպասիր, ծեր, անամօթ ստիկան, խայտառակ մարդ: Ասա, շուտ, այս ինչ դաւադրութիւն էր, որ գործեցիր:

**Գ Ո Ն.**— Խնդրում եմ, թող կորչի:

**ՌՈՒԲԷՆ.**— Կորիր ստոր արարած: Բոթելով ձեռքով. (Չափար գնում է շապով) Տեսնում ես Գոհարիկ ինչ (Սասիկ վրդոված). գծուծ գործ է կատարել:

**Գ Ո Ն.**— Հանգստացիր: Սիրելիս:

**ԱՐՈՒՍ.**— Խաղաղ իր:

**Գ Ո Ն.**— Գնանք: (Տանում է իր սեկեակը)

**Ե Ղ Ի.**— Արուսեակ, Արուսեակ:

**ԱՐՈՒՍ.**— Ինչ կայ:

**Ե Ղ Ի.**— Սա ինչ խայտառակութիւն է:

**ԱՐՈՒՍ.**— Այո, խայտառակ գործը չի ծածկում ու խայտառակութեամբ է վերջանում:

**Ե Ղ Ի.**— Վերջը էլ ինչ է կամենում, չէ որ հասաւ իր նպատակին:

**ԱՐՈՒՍ.**— Այլ, տեսակ էլ չէր կարող լինել, բռնութիւնը մի որոշ սահման ունի որ վերջանում է բռնաւորի խայտառակ անկումով:

**Ե Ղ Ի.**— Ես բռնութիւն չեմ գործ զրել, ես, եթէ ասում էի, ասում էի աւելի բախտաւոր կեանքի համար:

**ԱՐՈՒՍ.**— Գու, չէիր կարող նորա ցանկացած բաղտաւոր կեանք տալ:

**Ե Ղ Ի.**— Ինչու:

**ԱՐՈՒՍ.**— Որովհետեւ, նա գարունք է, նա կեանքի թարմութիւն է իսկ դուք ձմեռ: Նա նոր կեանք է, նա պէտք է, վերածնի կեանք, նա կեանքի երջանկութիւն է, իսկ դուք հին կեանք էք և ձեր ժամանակը անցել է, դուք նոր բան չէք կարող տալ և նոր բան չէիր կարող ասել:

**Ե Ղ Ի.**— Ուրեմն, ես մեռածների հաշուամ եմ, ձեր կարծիքով:

**ԱՐՈՒՍ.**— Չիր հանգստութեան ժամանակն է և ոչ գործելու:

**Ե Ղ Ի.**— Ուզում ես, ասել, որ ես կենդանի գիակների հաշուամ եմ, կամ ճիշտ ասել մեռածների... (Հագի կակղկերով)

**ԱՐՈՒՍ.**— Ինչու մեռածների, այլ պատաւոր ծերունիների:

**Ե Ղ Ի.**— Այ, մեռածների... և ինչու ապրել, որ իմ ազախիսս իմ ինամիս լինի և նրա որդին իմ փեսաս, ոչ... (ընկնում է արողի վերայ բայց Արուսեակը բռնելով թեւից տանում է սեկեակը ու հետ գալի շփորած, դուրս եմ գալիս Գոհարիկն ու Ռուբէնը):

**ԱՐՈՒՍ.**— (Գոհարիկին) Մեռաւ հին կեանքը, կեցցէ նորը:


**ԵՐԿՈՒՍ.**— Ինչպէս:

**Գ Ո Ն.**— Մեռաւ...

**ԱՐՈՒՍ.**— Այո, մեռաւ: (Տխուր)

**Գ Ո Ն.**— Մայրիկ, մայրիկ, (Չեկեկարով գնում է Ռուբէնին). Գնանք վերջին մնաս բարեաւ տանք: (Գնում են)





«Ազգային գրադարան»  
  
NL0363418

57343